Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

8(725)
2026
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ ● Lusarar

ՆԵՐԿԱՆ ԱՆՑՅԱԼԻ ՀԵՏ ԿԱՊԵԼՆ Է ԱՐՎԵՍՏ, ԴԱ Է ԱԶԳԻ ԶՈՐՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ՈՒԺԸ



Կցանկանայի, որ մեր ազգի մեջ մի սխալ սրբագրվեր. դա ծայրահեղ աստիճանի անցյալապաշտությունն է: Մենք՝ հայերս, այս ենք արել, մենք՝ հայերս, այն ենք, երբ դեռ ուրիշները չէին մոտեցել քաղաքակրթության ակունքներին: Հպարտությունն արդար է, եթե գիտակցական է և ոչ թե ձևական: Արդար է, երբ հպարտացող արժեքով եմ ապրում և ոչ թե այդ արժեքը իմ հայրերին վերագրում և նրանց դրամագլխով ապրում: Դա վատառողջ երևույթ է, նման է այն բանին, երբ ժառանգը հորից ժառանգած գումար ունի և այդ գումարի տոկոսով է ապրում՝ առանց որևէ ճիգի:

Երեկը գեղեցիկ կողմեր ուներ, երեկն ուներ նաև ժխտական կողմեր: Ո՞վ ասաց, որ մեր անցյալը միշտ այնպես փայլուն է եղել, ինչպես որ մենք ենք ներկայացնում: Վարդանի անունն իբրև հերոս և իբրև Սուրբ ենք պանծացնում, բայց մոռանում, որ Վարդանի կողքին նաև Վասակ ենք ունեցել: Մեր պատմության ընթացքը սպիտակ և սև թելերով հյուսված մի հյուսվածք է: Տեղ կա, որ սպիտակն է շատ, տեղ էլ կա, որ սևն է ուժեղ: Մենք մեր անցյալը ոչ թե պիտի աստվածացնենք, այլ անցյալը մենք պիտի ճանաչենք, պիտի ըմբռնենք իր ճերմակ և սև, իր դրական և ժխտական, իր բարձր և ստորին բոլոր կողմերով: Իսկ եթե մենք այսօրվա մեր կյանքն ապրենք միայն անցյալի շուքով, կնմանվենք այն տարեց մարդուն, ով իր ուժերն արդեն սպառած լինելով՝ անկարող է նոր իրագործումներ կատարելու և մխիթարվում է սոսկ իր անցյալի հուշերով: Մարդը ծերանում է: Բոլորս էլ պիտի ծերանանք, բայց՝ ոչ ազգը: Ազգը ծերություն չի ճանաչում, եթե ճանաչի՝ մահը կգա: Ազգը վերանորոգվող ուժ է: Սերնդեսերունդ կյանքից նոր ավիշ ընդունող, Աստծու տվածից, անցյալի փառքից, ապագայի տեսիլքից ուժ ըմպող մի հավաքականություն է ազգը:

Անցյալը մեզ համար կարող է լինել գերող, բայց կարող է լինել և դաստիարակ, նայած թե որն ենք ընտրում: Անցյալն անցյալ է: Ներկան անցյալի հետ կապելն է արվեստ, դա է ազգի զորության ամենակարևոր ուժը:

Սիրելինե՛ր, մոռանանք անցյալապաշտության այդ ծայրահեղ մոտեցումը: Անցյալը հարգենք ոչ թե անցյալի գերին լինելով, այլ անցյալից ներշնչման ուժ առնենք:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՀԻՇԵԼԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՈՉ ՉԷ

1. ՀԱՅՐԵՆԻՔ ԿՈՐՑՐԱԾ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՂՈԹՔՆ իր հայրենիքի համար պատերազմի քարոզչություն չէ: Սուրբ Գրքում հայրենազրկումը, գերությունը, ապաշխարությունը, վերադարձի հույսը և հայրերի երկրի համար աղոթքը մի ամբողջ հոգևոր թեմա են կազմում:

2. ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԲԱԶՄԱԹԻՎ ԱՆԳԱՄ ՑՈՒՅՑ է ՏԱԼԻՍ հայրենիքից բռնի հեռացված ժողովրդին, որը օտարության մեջ չի դադարում հիշել իր երկիրը, աղոթել, ապաշխարել և Աստծու ողորմությամբ վերադարձի հույսը պահել:

3. ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ ՎԿԱՅՈՒՄ է ՆԱԵՎ ԱՅՆ ՄԱՍԻՆ, թե ինչպես գերության մեջ գտնվող ժողովուրդը դառնում է առ Աստված, աղոթում և ապրում վերադարձի հույսով: Իսկ Երեմիա մարգարեի միջոցով Տերը Բաբելոնի գերության մեջ գտնվող ժողովրդին տալիս է նաև վերադարձի խոստումը.

«Այսպես է ասում Տերը. «Երբ որ մոտենա Բաբելոնի յոթանասուն տարին լրանալու ժամանակը, ես այցի կգամ ձեզ և կհաստատեմ ձեր մասին իմ բարի խոսքերը՝ վերադարձնելու ձեզ այս վայրը, քանզի միայն ես գիտեմ իմ մտադրությունները, որ խորհում եմ և պիտի խորհեմ ձեր մասին,- ասում է Տերը.- խաղաղությա՛ն մտադրություն և ոչ թե չարության: Դրանից հետո ես հույս կտամ ձեզ, և դուք կկանչեք ինձ, կգնաք և կաղոթեք ինձ, ու ես կլսեմ ձեզ: Կփնտրեք ինձ և կգտնեք, որովհետև ինձ փնտրելու եք ձեր ամբողջ սրտով: Ես կերևամ ձեզ,- ասում է Տերը,- և կվերացնեմ ձեր գերությունը. կհավաքեմ ձեզ բոլոր ազգերի միջից և բոլոր վայրերից, ուր ցրեցի ձեզ,- ասում է Տերը,- և կվերադարձնեմ ձեզ այնտեղ, որտեղից գերեվարեցի ձեզ (Երեմ. 29:10-14):

4. ԵՐԵՄԻԱՅԻ ԽՈՍՔԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՈՉ ՉԷ: Այն ուղղված է գերության մեջ գտնվող ժողովրդին և միավորում է երեք բան՝ դարձ առ Աստված, աղոթք և վերադարձի հույս: Հայրենիքի կորստից հետո Աստված չի պատվիրում ժողովրդին ջնջել հայրենիքը հիշողությունից: Ընդհակառակը՝ գերության մեջ ապրող ժողովուրդը շարունակում է սպասել, աղոթել և հուսալ վերադարձի համար:

5. ՆՈՒՅՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՏԵՍՆՈՒՄ ԵՆՔ ՍՈՂՈՄՈՆԻ ՏԱՃԱՐԱԿԱՆ ԱՂՈԹՔՈՒՄ: Նա իր աղոթքում անդրադառնում է նույնիսկ այն ողբերգական վիճակին, երբ ժողովուրդն իր մեղքերի պատճառով պարտվի, գերեվարվի և տարվի օտար երկիր: Բայց նույնիսկ այնտեղ ճանապարհը փակված չէ. եթե ժողովուրդը դարձի գա, զղջա և աղոթի՝ հայացքն ուղղելով դեպի իր հայրերի երկիրը, Սողոմոնը խնդրում է, որ Աստված երկնքից լսի նրանց աղոթքը և ների նրանց (Գ Թագ. 8:46–50):

6. ՈՒՐԵՄՆ ՀԱՅՐԵՆԱԶՐԿՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՂՈԹՔՆ ԻՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ Սուրբ Գրքի տեսանկյունից ոչ թե պատերազմի քարոզչություն է, այլ հիշողության, ապաշխարության, հույսի և Աստծո ողորմությանն ապավինելու արտահայտություն:

7. ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱՐ ԱՂՈԹՔԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՈՉ ՉԷ.

Սուրբ Պատարագի ընթացքում Արցախի համար հնչող աղոթքը որևէ ժողովրդի դեմ պատերազմի, վրեժխնդրության կամ արյունահեղության կոչ չէ: Եկեղեցին աղոթում է շինության, անսասանության, խաղաղության, ժողովրդի պահպանության և հայրենի սրբավայրերի համար:

Աղոթել կորուսյալ հայրենիքի համար և պատերազմ քարոզել՝ երկու բոլորովին տարբեր բաներ են: Աղոթքը խնդրանք է առ Աստված, ոչ հրաման՝ ուղղված բանակին:

8. ԱՐՑԱԽԸ ՄԵՐ ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ ՀԱՅՐԵՆԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍՆ է.

Հայրենիքը քրիստոնյայի համար միայն վարչական սահման կամ սեփականություն չէ: Այն նաև նախնիներից ստացած ժառանգություն է՝ իր գերեզմաններով, եկեղեցիներով, վանքերով, սրբավայրերով, պատմական հիշողությամբ և ժողովրդի ապրած կյանքով:

Ինչպես մարդը չի ընտրում իր ծնողներին, այնպես էլ չի ընտրում իր հայրերի պատմությունը: Եթե ծնողը տկարանում է կամ հիվանդանում, զավակը նրան չի ջնջում իր հիշողությունից, այլ առավել է հոգ տանում նրա մասին: Նույնպես հայրենիքի կորուստը չի վերացնում նրա նկատմամբ սերը, հիշողությունը և աղոթքը:

9. ԱՐՑԱԽԻ ԿՈՐՈՒՍՏԸ ՆԱԵՎ ԻՆՔՆԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿՈՉ է.

Ժողովրդի հոգևոր ու բարոյական անկումը չի կարող անհետևանք մնալ նաև նրա հասարակական և ազգային կյանքի համար:

Ցավալի է, բայց մենք չկարողացանք ըստ արժանվույն գնահատել այն ժամանակը, հնարավորություններն ու հաղթանակները, որոնք ունեցանք: Անկախության տարիներին չկարողացանք կառուցել այնպիսի հասարակություն, որի հոգևոր առանցքը կլիներ Աստված, իսկ հասարակական կյանքի հիմնարար արժեքները՝ արդարությունը, անձնազոհությունը, հայրենասիրությունը և ընդհանուր բարիքը:

Ընկանք նյութական բարեկեցության մրցավազքի մեջ, փառքը հաճախ տվեցինք մարդկանց, բայց ոչ Աստծուն, հույսներս դրեցինք անցողիկ բաների վրա, ավելի հանդուրժող դարձանք մեղքի ու պղծության նկատմամբ, իսկ անձնական բարեկեցությունը հաճախ վեր դասեցինք ընդհանուր հայրենական պատասխանատվությունից: Տուն պահող եղանք, բայց միշտ չէ, որ կարողացանք Հայրենիք պահող լինել:

10. ԿՈՐՑՐԱԾԸ ՉԻ ԴԱԴԱՐՈՒՄ ԱՂՈԹՔԻ ԱՌԱՐԿԱ ԼԻՆԵԼ.

Արցախը հայաթափված է, նրա ժողովուրդը՝ բռնի տեղահանված, բազմաթիվ սրբավայրեր՝ իրենց բնական աղոթական կյանքից զրկված: Բայց Արցախը չի կարող ջնջվել մեր պատմական հիշողությունից, մեր եկեղեցական գիտակցությունից և մեր աղոթքից:

Որևէ հրամանով հնարավոր չէ ժողովրդին պարտադրել մոռանալ իր հայրենիքը, իր գերեզմանները, իր վանքերն ու սրբավայրերը:

11. ԱՂՈԹՔԸ ՀՈՒՅՍԻ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ է.

Արցախի և ամբողջ աշխարհի Տերն Աստված է: Մեզ տրված չէ իմանալ Աստծո Նախախնամության բոլոր ճանապարհները: Մեզ տրված է ապաշխարել, ուղղել մեր կյանքը, չկորցնել հավատքը, սիրել միմյանց, պահպանել հիշողությունը, գործել և աղոթել՝ մեր հույսը դնելով ոչ միայն մարդկային ուժերի, այլև Աստծո ողորմության վրա:

Քրիստոնեական հույսը աշխարհիկ կանխատեսում չէ. այն վստահություն է, որ պատմության վերջին խոսքը մարդկային ուժին չի պատկանում, և որ ժողովուրդը նույնիսկ կորստի մեջ չպետք է դադարի աղոթելուց:

Եվ թերևս հայրենազրկված ժողովրդի հիշողության ամենահզոր աստվածաշնչյան արտահայտությունը Բաբելոնի գերության սաղմոսն է: Գերության մեջ գտնվող ժողովուրդը չի ասում՝ Երուսաղեմն այլևս մերը չէ, ուրեմն չհիշենք: Ընդհակառակը՝ օտարության մեջ Երուսաղեմի հիշողությունը դառնում է հավատարմության ուխտ:

«Եթե մոռանամ ես քեզ, Երուսաղե՛մ, թող իմ աջը մոռանա ինձ, թե չհիշեմ քեզ, թող լեզուս կցվի քիմքիս, եթե քո նվագը նախ չնվագեմ, ո՞վ Երուսաղեմ, սկի՛զբն իմ ուրախության» (Սաղմ. 136:5-6):

Եվ այսօր հայրենազրկված արցախցու ու Արցախը չմոռացող հայի սրտում այս սաղմոսը բնականորեն նոր արձագանք է գտնում. մենք ևս չենք կարող մոռացության տալ մեր հայրենի Արցախը:

12. ԻՆՉՈ՞Ւ ԵՆ, ՈՒՐԵՄՆ, ՔԱՀԱՆԱՆԵՐՆ ԱՂՈԹՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱՐ

ա) Որովհետև Եկեղեցին չի կարող աղոթքից արտաքսել մի ամբողջ ժողովրդի ցավը:

բ) Որովհետև Արցախը միայն աշխարհաքաղաքական հարց չէ. այնտեղ են մեր ժողովրդի տները, գերեզմանները, եկեղեցիները, վանքերը և դարավոր հոգևոր ժառանգությունը:

գ) Որովհետև հայրենազրկված ժողովրդի համար աղոթելը պատերազմի քարոզ չէ:

դ) Որովհետև խաղաղություն խնդրելը պատերազմի կոչ չէ:

ե) Որովհետև հիշելը պատերազմ չէ:

զ) Որովհետև ապաշխարելը պատերազմ չէ:

է) Որովհետև Աստծո ողորմությանը հուսալը և հայրենիք վերադարձի հույսը կենդանի պահելը պատերազմ չէ:

Այնպես որ՝ այո՛, քրիստոնյան պիտի աղոթի Արցախի համար: Ոչ ատելությամբ, ոչ վրեժխնդրությամբ, ոչ պատերազմի ցանկությամբ, այլ ապաշխարությամբ, հավատքով, խաղաղության խնդրանքով և այն հույսով, որ Աստծո համար անհնարին ոչինչ չկա:

ԱՂՈԹՔ

Տե՛ր Հիսուս Քրիստոս, ողորմի՛ր մեզ: Նե՛ր մեզ, որ չկարողացանք ըստ արժանվույն պահել մեր հայրերից ստացած սրբազան ժառանգությունը: Տո՛ւր մեզ ապաշխարության հոգի, զղջացող սիրտ, ուղիղ միտք և հոգևոր արթնություն, որպեսզի դառնանք դեպի Քեզ, ճանաչենք մեր մեղքերն ու սխալները և արժանի պտուղներ տանք ապաշխարության: Մենք անդադար աղոթում ենք մեր կորուսյալ Հայրենիքի սրբազան մի նշխարը կազմող Արցախի, բռնի տեղահանված մեր եղբայրների ու քույրերի, մեր լքված վանքերի, եկեղեցիների ու սրբավայրերի համար՝ հուսալով, որ Քո ողորմության դուռը մի օր կբացվի մեր առջև: Պահի՛ր մեր մեջ վերադարձի հույսը և առաջնորդի՛ր մեր ժողովրդին Քո կամքի, արդարության ու խաղաղության ճանապարհով: Ամեն:

ՍԱՄՎԵԼ ԴՊԻՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

«Գործը հավիտյան է, մեր ժողովուրդը՝ հավերժական»
Գուրգեն Մելիքյան

Մեր ժողովրդի արժանապատիվ զավակներից, «Նեմեսիս» գործողության հերոս անդամներից Արտաշես Գևորգյանը ծնվել է Էրզրումի վիլայեթի Խոտորջուր գավառի Միջինթաղ գյուղում: 1916 թ. Արտաշեսն իր եղբոր՝ Թորգոմ Գևորգյանի (Ազվին) հետ, որը եղել է Զորավար Անդրանիկի համհարզը, մտնում է Անդրանիկի զորագունդը և ակտիվ մասնակցում 1916-1919 թթ. զորավարի մղած բոլոր մարտերին: 1922 թ. հուլիսի 21-ին ժամը 22:00-ի սահմաններում Արտաշեսն իր ընկերներ Պետրոս Տեր-Պողոսյանի և Ստեփան Ծաղիկյանի հետ Թիֆլիսում սպանում է 1914-1916 թվականներին Հայոց Ցեղասպանության գլխավոր հանցագործներից մեկին՝ Օսմանյան կայսրության ռազմածովային նախարար Ջեմալ փաշային: 1936 թ. Արտաշեսը, մեր ազգի բազում լավագույն զավակների պես ևս ձերբակալվում և 1937 թվականի օգոստոսի 14-ի, լույս 15-ի գիշերը ժամը 02:00-ին գնդակահարվում է Ջեմալ փաշային սպանելու և Բերիայի հանդեպ իբր մահափորձ կազմակերպելու մեղադրանքով: Ստալինի մահից հետո բոլոր բռնադատվածները, նաև Արտաշեսը, հետմահու արդարացվել են (1956թ.): Սա է մեր պատմության ցավոտ էջերից մեկը, երբ օտարի ցուցումով հայ չեկիստներն սպանում էին ազգի լավագույն ներկայացուցիչներին: Սակայն Արտաշեսն ու իր ընկերները հավերժ հիշվելու են որպես Ազգային արժանապատվության մարտիկներ: Ինչպես ասել է Թալեաթ փաշային ալլահի գիրկն ուղարկած Սողոմոն Թեհլիրյանը. «Ես մարդ եմ սպանել, բայց մարդասպան չեմ», այնպես էլ «Նեմեսիս» ծրագրի բոլոր մասնակից տղերքը մարդասպան չէին, վրիժառուներ էին: Հայոց վրիժառուների մասին պատահական չէ Արմին Թեոֆիլ Վեգների հայտնի խոսքը. «Ինքը՝ Սողոմոն Թեհլիրյանը, միայն խորհրդանիշ է, հյուլե, ում մեջ կենտրոնացված է քամահրված ռասսայի ցավը, և ով հուսահատ ինքնապաշտպանության մեջ իր վրեժն է լուծում»:

Օգոստոսի 14-ին՝ Արտաշես Գևորգյանի գնդակահարման օրը, Երևանում խորհրդանշվեց մշակութային միջոցառմամբ: Օղակաձև այգում 2023 թ. ապրիլի 25-ին բացված «Ազգային արժանապատվության ասպետներին» աղբյուր-հուշակոթողի մոտ Արտաշես Գևորգյանի թոռան՝ Արմեն Գևորգյանի նախաձեռնությամբ հավաքվել էին հայ մտավորականներ՝ տարբեր ոլորտներից՝ նկարիչներ, դասախոսներ, զինվորականներ, լրագրողներ, պարարվեստի նվիրյալներ, այլք: Սկզբում տեղի ունեցավ ծաղիկների խոնարհում հուշարձան-աղբյուրի մոտ: Ռազմական ռեժիսոր Սամվել Թադևոսյանն անդրադարձավ օրվա խորհրդին: Արմեն Գևորգյանը ողջունեց ներկաներին, անդրադարձավ հերոս պապի կերպարին՝ ասելով. «Այսօր մեր ընտանիքի համար շատ ծանր օր է, որովհետև 89 տարի առաջ՝ այս օրը գնդակահարել են իմ պապ Արտաշես Գևորգյանին: Մինչև այսօր մենք չունենք մեր հարազատի գերեզմանը: Բայց քանի որ պապիս ու իր ընկերների գործն անմահ է ու հավերժացած, օրը խորհրդանշական է: Տեղեկացրեց՝ միջոցառմանը ներկա ճանաչված հայ մտավորական Վիգէն Լէփէճեանը Երևան է ժամանել Երուսաղեմից: «Իմանալով, որ «Նեմեսիսը՝ մշակույթում» նոր շարժում ենք սկսել, պարոն Լէփէճեանը սիրով համաձայնվեց համագործակցել և մշակութային մեծ գործ է արել՝ իր ստեղծագործած նկարն այս հուշակոթողի մոտ նվիրում է Նեմեսիսի թանգարանին», -ասաց Ա. Գևորգյանը: Հավելեց նաև՝ աշխարհի տարբեր վայրերից շատ հայ մտավորականներ են ցանկություն հայտնել՝ աջակցելու Նեմեսիսի թանգարանի հիմնման ծրագրին: Միջոցառմանը ներկա էին նրա ընկերներից՝ Ս. Պետերբուրգից, Երուսաղեմից, Բեյրութից, ԱՄՆ-ից, Երևանից, այլ վայրերից: Իր խոսքում Երուսաղեմից եկած արվեստագետ, մեր հայրենակից Վ. Լէփէճեանը կարևորեց «Նեմեսիս» գործողությունը որպես հայոց արժանապատվության երևույթ: «Ինձ համար մեծ պատիվ է՝ շրջապատված լինել մտավորականներով՝ նկարիչներ, քանդակագործներ, արցախցի հերոսներով, զինվորներով: Ողջույն Սուրբ քաղաք Երուսաղեմից»,- ասաց Վ. Լէփէճեանը և ներկայացրեց իր ստեղծագործություն-նկարը, որը խորհրդանշում էր Հայոց Մեծ Եղեռնը, «Նեմեսիս» գործողությունը, Մայր Հայաստանը, խաղաղություն և այլն:

Միջոցառմանը ներկա էր նաև ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, Հայաստանի ազգային պարարվեստի միության նախագահ, «Բերդ» պարային համույթի գեղարվեստական ղեկավար և գլխավոր բալետմայստեր Կարեն Գևորգյանը, որն իր ելույթում ասաց. «Պատահական չէ, որ վրիժառության գործողությունը կոչվեց «Նեմեսիս»՝ հին հունական աստվածուհու անունով: Եվ վրեժխնդրության գաղափարով վարակվեցին այս գործողության ներկայացուցիչները: Ես՝ որպես ազգային պարի գաղափարը կրող, կարծում եմ՝ ցեղասպանները ոչ միայն կոտորել են մեր ժողովրդին, խլել են մեր հայրենիքը, նաև խլել են մեր մշակույթը: Եվ քանի որ սա մեր մշակույթի նոր գաղափարի ծնունդ է, կարծում եմ՝ այսուհետ ավելի շատ մեր հայրենակիցներ պետք է համախմբվեն այս գաղափարի շուրջ...»: Անդրադառնալով հայկական պարերի ստեղծմանը՝ նշեց, որ հաճախ դրանք ստեղծվում էին նաև հերոսների պատվին. հայկական ռազմապարերն ստեղծվում էին դյուցազունների ռազմական գործողությունների ժամանակ, երբ դրանք հաղթական ավարտ էին ունենում: «Կարծում եմ՝ «Նեմեսիս»-ի գաղափարակիցները հասել են իրենց հաղթական ավարտին: Հետևապես պետք է ստեղծվի նոր, ռազմական բնույթի պար, որը նոր ոգեշնչում կտա «Նեմեսիս»-ի գաղափարին»,- հավելեց Կ. Գևորգյանը:

Բեյրութից Երևան եկած Վիգենն անդրադարձավ Լիզբոնի գործողությանը՝ այն համարելով «Նեմեսիս»-ի շարունակություն: 1983 թ. հուլիսի 27-ին Հայ հեղափոխական բանակի հինգ անդամներ՝ Վաչե Տաղլյանը, Սեդրակ Աճեմյանը, Սիմոն Յահնիյանը, Արա Քրջլյանը և Սարգիս Աբրահամյանը միջազգային հանրության ուշադրությունը Հայոց Ցեղասպանության վրա սևեռելու համար մտան Լիսաբոնի թուրքական դեսպանատուն և հայտարարություն տարածելուց հետո պայթեցրին իրենց: Ասաց՝ համեստ ու որևէ կերպ աչքի չընկնող տղաներ էին, որոնց գործողության մասին իմացել են մամուլից:

Միջոցառմանը ներկա զինվորականներից Զավեն Հունանյանը և Արգամ Գևորգյանը ծառայել են Զրականում, Մեղրիում: Եկել էին իրենց զինվորների հետ, որոնք մասնակցել են 2016 և 2020թթ. պատերազմներին: Զ. Հունանյանը կոչ արեց զինվորականներով, մտավորականներով որպես միասնության նշան ու խոնարհում «Նեմեսիս»-ի հերոսների՝ մի բռունցք դառնալ:

Մեղրու գնդի նախկին հրամանատար Արգամ Գևորգյանի հետ ծանոթ եմ Զրականից. միասին եղել ենք մարտական դիրքերում 2019թ. մայիսին: Հիշեցինք Զրականի հերոս պաշտպաններին:

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի նախկին դեկան, «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներին հիմնադրամ»-ի հիմնադիր ու գործադիր տնօրեն, պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանը կարևորեց 2023-ին բացված հուշարձան-աղբյուրի դերը, որը մեր ժողովրդի արժանապատվության խորհրդանիշն է ու յուրահատուկ սրբատեղի: Շնորհակալություն հայտնեց կառուցման հովանավորներին՝ լոնդոնաբնակ Բագրատ Նազարյանին և Թոնի Կահվեին, որը նույնպես ներկա էր միջոցառմանը: «Նեմեսիս» գործողության ու վրիժառուների գործը կարևորվեց նաև այլ ելույթներում: Ռազմահայրենասիրական երգերի կատարումով հանդես եկավ երգիչ Գևորգ Համբարյանը:

ՎԵՐԵԼՔ՝ ԼՈՒՍԱԲԱՑԻՑ ԱՌԱՋ

«Խուստուփ լե՞ռը: Այդ հպարտ հսկային էր վիճակված մեր լեռնաշխարհի ազատության ու փառքի խորհրդանիշը լինելու»:
Գ. Նժդեհ

«Հանուն հայրենիքի՝ Դավիթբեկաբար». այս նշանաբանով Նժդեհն ու իր զինվորները 1920թ. օգոստոսի 25-ին Կապանի Կավարտ գյուղում երդվեցին կռվել հայրենիքի համար, քանի ողջ են: Այսպիսով հիմնվեց «Դավիթբեկյան ուխտեր»-ը: Սպարապետ Գարեգին Նժդեհի ծննդյան 140 և Դավիթբեկյան ուխտերի 106-ամյակին էր նվիրված օգոստոսի 22-23-ին տեղի ունեցած ուխտագնացությունը Նժդեհյան սրբավայրեր և խորհրդանշական վերելք Խուստուփի գագաթ: «Միասնության դրոշ» նախաձեռնության համակարգող Արա Շահինյանն էր կազմակերպել ուխտագնացությունը, որն սկսեցինք Երևանից՝ Գարեգին Նժդեհի արձանի մոտից: Այստեղ Ա. Շահինյանը հակիրճ ներկայացրեց Նժդեհի և Դավիթբեկյան ուխտերի մասին: Ասաց. «Դավիթբեկյան Ուխտերի կազմավորումն ու գայլավաշտերի ստեղծումը հիմք դարձան բոլշևիկա-թրքաթաթարական զավթիչների կողմից գրավված ողջ Սյունիքը հային հետ վերադարձնելու՝ Գարեգին Նժդեհի ու իր զինակիցների վերմարդկային պայքարին ու հաղթանակին»:

Հաջորդ կանգառը կայացավ Վայոց Ձորի մարզի Գլաձոր գյուղում, որտեղից արդեն ամենագնացներով ուղևորվեցինք Սպիտակավոր եկեղեցի, որը, ըստ պատերին եղած արձանագրությունների, հիմնադրվել է Սյունյաց Էաչի իշխանի կողմից, որը մահացել է 1318 թվականին, իսկ շինարարությունը 1321 թվականին ավարտել է նրա որդի Ամիր Հասանը: Նշեմ՝ այցի օրը բարեկարգվում էր Սպիտակավոր տանող ոլորապտույտ՝ մոտ 9 կմ ճանապարհը: Եկեղեցու հարավային պատի տակ է ամփոփված Գ. Նժդեհի աճյունը: Ա. Շահինյանը և պատմաբան Գոռ Ղազարյանը տեղեկություններ տվեցին՝ ինչպես է Սպարապետի աճյունը 1983թ. Վլադիմիր քաղաքի բանտային գերեզմանոցից Պավել Անանյանը (Նժդեհի թոռնուհու ամուսինը) տեղափոխել Երևան: 3 տարի Սպարապետի նշխարները մնացել են Վարագ Առաքելյանի տան նկուղում: Նույն 1983-ի հոկտեմբերի 6-ի գիշերը Վարագ Առաքելյանը, Արցախ Բունիաթյանը, Ժորա Բարսեղյանը, Գարեգին Մխիթարյանը, Գուրգեն Արմաղանյանը, Անդրանիկ Կարապետյանը Բաղաբուրջ գյուղի բնակիչ Ստեփան Կարապետյանի «Վիլիս» մեքենայով գաղտնի Նժդեհի մասունքներից ողը տարել են Խուստուփի լանջում գտնվող Կոզնի աղբյուր և ամփոփել դրա մոտ: Երբ բնակվում էի Բերձորում, հաճախ էի շփվում այդ նվիրյալներից Քաշաթաղի շրջանային բուժմիավորման հիմնադիր ու գործադիր տնօրեն, ազատամարտիկ, գրող, հասարակական գործիչ, ռազմական բժիշկ Արցախ Բունիաթյանի հետ, որը նաև գրել է «Նժդեհի վերադարձը» գիրքը: Արցախ Բունիաթյանն ասում էր՝ երդվել էին՝ յուրաքանչյուր տարվա հոկտեմբերի 6-7-ին այցելել իրենց հիմնած սրբավայրը: Ստեղծել էին իրենց թևավոր խոսքը. «Եթե չգանք, ուրեմն չկանք..»: Յուրաքանչյուր տարի նույն հոկտեմբերի 7-ին Արցախի և այլ ուխտավորների հետ այցելում էինք Նժդեհի Խուստուփյան սրբավայր: Այստեղ Արցախը պատմում էր. «Գիշերվա կեսին Խուստուփի լանջով մեկ տարածվել էր Աթանաս վարդապետի ձայնը. շարական էր երգում, երբ հուղարկավորում էինք Նժդեհի ողը»: Կոզնի աղբյուրը գտնվում է Խուստուփի լանջին, որ մոտ է ամփոփված Նժդեհի մասունքը:

«Կոզնի», երբեմն՝ «Կոզեն» անվանումը որոշները համարում են ոչ հայկական բառ: Սակայն տեղանվան ամենահավանական ստուգաբանությունը կապված է հայերեն բարբառային «ԿՈԶՆԻ»-«ՈԶՆԻ» ձևի հետ: Մեծ լեզվաբան Հրաչյա Աճառյանի տեղեկությամբ՝ «ՈԶՆԻ» կենդանու բարբառային «ԿՈԶՆԻ» տարբերակը տարածված է եղել հայերեն մի շարք բարբառներում՝ Գորիս, Արցախ և այլն: Հետագայում նույն բառն օգտագործել են նաև մի շարք խոսվածքներում: Լեզվաբանական գիտությունների դոկտոր Միհեր Քումունցը, որը ծնվել է Գորիսում և բնակվում է այնտեղ, նշում է. «Կապանի տարածքում գտնվող Կոզնի աղբյուրի անվան հիմքում կարելի է տեսնել ոչ թե գրական հայերենի «ոզնի» ձևի պատահական հնչյունափոխություն, այլ տարածաշրջանային բարբառային «կոզնի» տարբերակը: «Կոզնի» տեղանունը նոր չէ և նախորդում է Գարեգին Նժդեհի մասունքի՝ այնտեղ ամփոփմանը և դրա հետ կապված հետագա սրբավայրային նշանակությունը: Միաժամանակ տեղական գործածության մեջ արձանագրված է «Կոզեն», որը, անշուշտ կոզնի բառի բարբառային հնչյունափոխ տարբերակներից մեկն է՝ կոզնի (նի-ի դրափոխություն՝ ին) >կոզին, ապա՝ ի>ե՝ կոզեն: Հետևաբար «Կոզնի աղբյուր»-«կոզնի-ոզնի» ստուգաբանական կապը կարելի է հավանական համարել: Սակայն տեղանվանական վերջնական մեկնաբանության համար անհրաժեշտ է պարզել, թե ինչ կոնկրետ բնաշխարհագրական կամ տեղական պայմանով է «Ոզնի» անվանումը փոխանցվել տվյալ աղբյուրին»:

Այսօր միայն Ժորա Բարսեղյանն է ողջ այդ Նժդեհյան մասունքները հայրենիք բերող նվիրյալներից, սակայն սրբավայր այցելուների թիվն ավելացել է: Արցախը պատմում էր նաև, թե ինչպես են 3-4 տարի զորավարի նշխարները գաղտնի պահել Վարագ Առաքելյանի տանը, հետո՝ 1987թ. հունիսի 16-ին տեղափոխել ու ամփոփել Սպիտակավորում՝ մի կերպ խուսափելով ՊԱԿ-ի հետապնդումից: Այսպիսով, Սպիտակավոր վանքի տարածքը դարձել է նաև Նժդեհյան սրբավայր, և յուրաքանչյուր ապրիլի 24-ին ու հունիսի 16-ին մեծ թվով մարդիկ են ուխտի գալիս: Նժդեհի շիրիմին տեղի ունեցավ խնկարկում: «Նժդեհ» երգով հանդես եկավ Ա. Շահինյանի որդին՝ Հայկը, որը Սպարապետին նվիրված երգ է գրել և կատարեց արդեն Խուստուփի գագաթին հաջորդ օրը: Սպիտակավոր էր միայնակ հասել գերմանացի մի աղջիկ զբոսաշրջիկ: Տեղեկացավ Սպարապետի մասին: Դեպի Կապան ճանապարհին եղավ այցելություն նաև Բաղաց թագավորության նշանավոր Որոտնավանք, որի հիմնանորոգումը մոտենում է ավարտին: Գտնվում է Սիսիանից մոտ 14 կմ արևելք՝ Որոտանի կիրճի ձախակողմյան բարձունքի վրա՝ Որոտնա ամրոցի դիմաց: Հիմնադրվել է 1000 թվականին Սյունյաց թագուհի Շահանդուխտի կողմից:

ԽՈՒՍՏՈՒՓՅԱՆ ՍՐԲԱՎԱՅՐ

ՎԵՐԵԼՔ՝ ԼՈՒՍԱԲԱՑԻՑ ԱՌԱՋ

Երեկոյան մթնշաղին Կապանից ամենագնաց և բեռնատար «ԶԻԼ» մեքենաներով անտառապատ ու քարքարոտ ճանապարհով բարձրացանք Խուստուփի լանջերին գտնվող վրանատեղի: Ինչ խոսք, ցանկացած նման արշավի կարևոր մասը խարույկն է: Գիշերակացը կարճ է տևում. լույսը չբացված՝ լապտերներով լուսավորելով դեպի լեռան գագաթ տանող արահետը, ընկանք ճամփա: Իհարկե, մեզանից առաջ արդեն մի քանի խումբ ճանապարհին էին: Մթության մեջ լապտերների լույսերն էին առկայծում: Դժվար է վերելքը դեպի Խուստուփի գագաթ, բայց ուխտագնացը չպետք է վախենա դժվարություններից:

Խուստուփ լեռնագագաթը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի արևելյան մասում՝ Կապան քաղաքից 10 կմ հարավ-արևմուտք, Խուստուփ-Կատարի լեռներում: Ունի 3201 մ բարձրություն: Ուխտագնացության մասնակիցներս տարբեր տարիքի և ֆիզիկական պատրաստվածության տեր էինք, բայց կար նպատակ՝ ոգեկոչել Զորավար Նժդեհի և Լեռնահայաստանի Դյուցազնամարտի անմահ նվիրյալների անմար հիշատակը: Ճանապարհին Գ. Ղազարյանն ասաց. «Բազմաթիվ թելերով են կապված Խուստուփը և Զորավարը: Գ. Նժդեհը Խուստուփը ներկայացնում է որպես Սյունիքի դիմադրության հավաքական խորհրդանիշ: Այն հանդիսանում է Սյունիք-Լեռնահայաստանի պատմական հիշողության, հերոսական պայքարի և ազգային անմահության խորհուրդը: Գ. Նժդեհը Խուստուփին վերագրում է սրբազան նշանակություն՝ կապելով այն հայ ժողովրդի փրկության, ազգային միասնության և գալիք հաղթանակների հետ: Պատահական չէ, որ զորավարը ժողովրդին պատգամում է իրեն թաղել Խուստուփի ամենաբարձր կատարին»:

Վերջապես արևը ողջունեց, ու իր ողջ գեղեցկությամբ ներկայացավ Խուստուփի շրջակայքը: Հյուսիսարևելյան կողմում Կապան քաղաքն է: Երևում են նաև հարակից բնակավայրերը: Հեռվում՝ հարավարևելքում, նշմարվում է Արաքսի ջրամբարը: Այն կառուցվել է, երբ տարածքն ազատագրել ու վերաբնակեցնում էինք: Ջրամբարի հենապատը կառուցվել է Խուդափերինի կամրջից քիչ վերև: Քաշաթաղի մայր գետը՝ Հակարին, իր մեջ առնելով Որոտանը, այս մասում է միանում Արաքսին: Հակարիի ափերին էր փռված Քաշաթաղի հարավային բնակավայրերից Աղածորը, որտեղ բնակություն էր հաստատել Գագիկ Խաչատրյանի ընտանիքը՝ Դվինից: Գագիկի Հակոբ որդին այստեղ ուսում առավ, գերազանցությամբ ավարտեց դպրոցը, ընդունվեց Երևանի պետական մանկավարժական համալսարանի պատմության ֆակուլտետ: 2014-ին զորակոչվեց Հայոց բանակ. ծառայում էր լեգենդար «Եղնիկներ» զորամասում: 2015-ի մարտի 19-ին հերոսաբար նահատակվեց 3 ընկերների հետ թշնամու դեմ անհավասար մարտում: Հայրը որդուն հուղարկավորեց Աղածորում՝ Խուստուփի դիմացի ոչ բարձր բլրակի վրա: Խուստուփից նայում եմ հեռու ու գտնում Աղածորը, երևում է ճանապարհի խաչմերուկը: Քիչ հեռու էր Հակոբի սրբավայր-շիրիմը՝ արդեն իր անվան դպրոցի հարևանությամբ: 2020թ. սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմը շատ բան տարավ մեզանից, նաև՝ Հակոբի շիրիմը: Խուստուփի լանջից արդեն հայացքով եմ անցնում հայրենի Քաշաթաղի ճանապարհներով, հասնում Խուդափերինի կամուրջ, ու...

Մի քանի ժամ տևեց վերելքը, մինչև հասանք Խուստուփի արդեն ժայռեղեն կատարի տակ: Հեռվից հետաքրքիր ու գեղեցիկ տեսարան է. Լեռան կիսակլոր ժայռեղեն գագաթին հարյուրավոր մարդիկ կան: Որոշ խմբեր արդեն իջնում էին, որոշները բարձրանում: Ժայռերի միջից հայտնվեցին նաև 3 քարայծ՝ երկուսը մեծ՝ մեկը՝ փոքր: Զգացվում է՝ հաճախ են շփվել մարդկանց հետ ու չէին վախենում: Արդեն իջնող խմբի մեջ հանդիպում եմ ծանոթներիդ՝ Հրայր Սուրմալեցուն, որը հաճախ է նման արշավներ կազմակերպում, քրոջս թոռանը՝ Արսենին, որը ուսանում է Չինաստանի համալսարաններից մեկում, արձակուրդ է եկել և որոշել՝ անպայման բարձրանալ Խուստուփի գագաթ:

Լեռան գագաթին արդեն այլ է. ողջ տարածքն աչքիդ առաջ է: Ժայռեր են ու ժայռեր գագաթին, ներքևում 2 քարանձավ կա: Ըստ տեղեկությունների՝ Նժդեհը նաև այստեղի քարանձավներում է պատսպարվել: Մեր խմբից քանոնահար Նարեն, որը ուխտի էր եկել ծնողների ու Նարեկ եղբոր հետ, լեռան գագաթ հանեց իր երաժշտական գործիքը ու նվագեց: Բացառիկ երևույթ. ծովի մակերևույթից 3200 մետր բարձրության վրա՝ կարմրավուն ժայռերի տակ՝ Հայոց Եռագույնը թիկունքում, դեռատի Նարեն, քարին նստած, նվագում է: Քամուն զուգընթաց՝ հնչում է հայ ժողովրդական «Սարերի հովին մեռնեմ» երգի երաժշտությունը: Կիթառի նվագակցությամբ «Նժդեհ» երգն է երգում Հայկը: Լեռան

գագաթին լուսանկարվեցինք խմբով: Մեզ միացավ նաև բելգիացի աղջիկ-զբոսաշրջիկ՝ լուսանկարչական խցիկով, լուսանկարվեց, իմացավ Նժդեհի մասին: Իջնելով՝ Լեռան ժայռեղեն գագաթից՝ լուսանկարիչ Սուրեն Արենց Սիմոնյանի հետ բարձրացանք Նժդեհի կիսանդրու մոտ: Այստեղ էր նաև Արցախյան 44-օրյա պատերազմում ոտքերը կորցրած քաջորդիներից Նորայր Ավագյանը, որը մեր խմբի կազմում էր, սակայն լեռան գագաթ էր բարձրացել ամենագնացով: Երեկոյան արդեն վրանատեղիում էինք, որտեղից էլ նույն «ԶԻԼ» բեռնատարի թափքում տեղավորված՝ հասանք Կապան ու վերադարձանք Երևան: 20-ից ավելի մարդ կար մեր խմբում, շատերս՝ անծանոթ: Սակայն բաժանվեցինք արդեն հարազատացած: Ուխտավորներից Գայանե Ավետիսյանն իր ֆեյսբուքյան էջում գրել է. «... Ինձ համար հիշարժան պահ էր Խուստուփի գագաթին Նժդեհի «Իմ պատասխանը» գրքի խմբագիր, մեր սիրելի ընկեր Գոռ Ղազարյանի մակագրությամբ ստանալ հիշատակված գիրքը»: Ուխտագնացության նախաձեռնող ու կազմակերպիչ Արա Շահինյանը, որի ծնողները նույնպես մեզ հետ էին, և մայրը՝ տիկին Լենան էր հիմնականում հոգում սննդի հարցը, իր ֆեյսբուքյան էջում գրել է. «Տարին մի քանի անգամ ենք կազմակերպում ուխտագնացություններ, բայց այս վերջինը՝ նվիրված Գարեգին Նժդեհի ծննդյան 140 և Դավիթբեկյան ուխտերի ստեղծման 106-ամյակին, հույժ կարևորվեց ուխտագնացների կամային բարձր հատկանիշների օրինակելիությամբ: Ուղղակի աննկարագրելի է այն տեսարանը, երբ խմբի անփորձ տարեցներն են ոգևորում մյուսներին Խուստուփ լեռան դժվարին հատվածները բարձրանալը, երբ նստում են հանգստանալու, տեսնում ես թե ինչպես են դողում ոտքերները, բայց... Այո հենց այդ «բայց»-ն է, որ ունենք ու չենք գործադրում նպատակի վեհություն, նպատակադրություն, բարձր կամային հատկանիշներ, անձնուրաց «կռիվ», թեկուզ ինքդ քեզ հետ, հաղթանակի բաղձանք՝ թեկուզ փոքրիկ: Տարեցներից մեկն անփորձ, մյուսը փոքրիկ սարեր հաղթահարած, երրորդը՝ վիրահատված, մեկ ուրիշը տասնամյակներով չարշաված, հիացմունք էին առաջացնում ու ոգևորություն ներշնչում Խուստուփի գագաթին: Ի սկզբանե նրանց վերելքը նախատեսված էր ամենագնացներով, բայց վերջին օրը, միմյանցից անկախ, հրաժարվեցին: Խորհուրդ. եթե չունեք շատ լուրջ առողջական խնդիր, Սյունյաց աշխարհի այդ Սրբազան կատար բարձրացեք ոտքով, ու ձեր ուխտը կամ ձևակերպած նպատակը՝ ձեր մտքում»:

Ինչ խոսք՝ կա վախ, որ չես կարող հաղթահարել բարձունքը, սակայն պետք է հավատաս ուժերիդ, ստուգես քեզ, ինչպես ես արեցի ու հասա Սրբազան լեռան գագաթ:

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Օգոստոսի 18-ին Երևանում՝ «Դիալոգ» ՀԿ մշակութային կենտրոնում, կայացավ Հայաստանի թատերական գործիչների միության (ՀԹԳՄ) և Մոսկվայում գործող «Դիալոգ» հասարակական կազմակերպության (ՀԿ) համատեղ հերթական մշակութային միջոցառումը: Նշված կառույցների ղեկավարներ Հակոբ Ղազանչյանն ու Յուրի Նավոյանն ստորագրեցին համաձայնագիր Հայ և ռուս արդի դրամայի թատրոնի հիմնադրման ուղղությամբ: Ինչպես գիտենք, վերջերս ՀԹԳՄ նախագահ Հ. Ղազանչյանի և «Դիալոգ» ՀԿ նախագահ Յու. Նավոյանի նախաձեռնությամբ ստեղծվել է համատեղ «Հայ և ռուս արդի դրամայի թատրոն»: Եվ Հ. Ղազանչյանն ու Յու. Նավոյանը հանդիպում ունեցան նորաստեղծ թատրոնի երիտասարդ դերասանական կազմի հետ, որոնք Երևանի Գալյա Նովենցի անվան թատերական դպրոցի շրջանավարտներ են, իսկ նրանց կուրսի ղեկավարը հենց Հ. Ղազանչյանն է: Նման հանդիպում կայացավ նաև այս տարվա հունիսի 11-ին Գալյա Նովենցի անվան թատերական դպրոցում գործող Արցախյան հատուկ կուրսի ուսանողների հետ, որոնք հաջողությամբ ավարտել էին առաջին տարին և փոխադրվել երկրորդ կուրս:

Ինչպես այն ժամանակ, այնպես էլ օգոստոսի 18-ին Յու. Նավոյանի նախաձեռնությամբ թատերական խմբի ուսանողներին հատկացվեցին գրքեր՝ հայ և ռուս դասականների ստեղծագործություններ, ինչպես նաև՝ «Դիալոգ»-ի աջակցությամբ հրատարակվածներ: Ողջունելով երիտասարդ դերասաններին՝ Յու. Նավոյանը ներկայացրեց «Դիալոգ»-ի ներկայացուցիչներին, որոնք մասնակցում էին հանդիպմանը: Տեղեկացրեց՝ «Դիալոգ» մշակութային կենտրոնում իրենց փորձերն են անում արցախյան տարբեր մշակութային խմբեր: Այստեղ տեղի են ունենում վարպետաց դասեր: Ուրախությամբ տեղեկացրեց՝ օր առաջ Արարատի գագաթին ծածանվել է «Դիալոգ»- դրոշը: Կարևորեց Հայ և ռուս արդի դրամայի թատրոնի ստեղծումը որպես ընդհանուր իմաստային տարածք և նոր գեղարվեստական մոտեցման դրսևորման հարթակ: Նշեց՝ Հայ և ռուս արդի դրամայի թատրոնը վարձակալության հիմունքներով կտեղակայվի Հայաստանի թատերական գործիչների միության շենքում, և այդ առթիվ էլ ստորագրվեց համաձայնագիրը: «Հայ-ռուսական մշակութային կապերը պարզապես անցյալ չեն, դրանք մեր ներկան են: Այս թատրոնը կդառնա դեպի ապագա ուղղված կամուրջ»,- վերջերս նորաստեղծ թատրոնի մասին ասել էր Յու. Նավոյանը: Դիմելով ավարտական խմբի երիտասարդ դերասաններին՝ համոզմունք հայտնեց՝ նորաստեղծ թատրոնը լավ ապագա է ունենալու:

ՀԹԳՄ և «Դիալոգ» ՀԿ կապը կարևորեց Հ. Ղազանչյանը: Նշեց՝ նորաստեղծ թատրոնի կայացումը չէր կայանա առանց «Դիալոգ»-ի աջակցության: Նախագիծը նպատակ ունի համատեղել դասական ավանդույթներն ու ժամանակակից դրամատուրգիան: Նոր երևանյան բեմի խաղացանկը հիմնականում կազմված է արդիական պիեսներից, որոնք արձագանքում են XXI դարի մարտահրավերներին՝ համադրվելով համաշխարհային դասական գրականության հետ: Թատրոնի մեկնարկը լինելու է 3 պիեսով՝ նաև հրավիրված դերասանների մասնակցությամբ: Իսկ դերասան դառնալու համար կարևորեց հատկապես խաղը բեմում: «2 տարում իմ աչքի առաջ դարձան դերասաններ ուսանողներս»,-ասաց Հ. Ղազանչյանը՝ կարևորելով ձգտումը, տա-

ղանդը: Անդրադարձավ նաև Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի վերակայացմանը Երևանում, որը նույնպես Յու. Նավոյանի նախաձեռնությամբ ու հովանավորությամբ, ինչպես նաև իր աջակցությամբ է: Նույն «Դիալոգ»-ի աջակցությամբ են Երևանում վերակազմավորվել ու շարունակում են իրենց գործունեությունը «Արցախ» ջազը, «Վարակն», «Արցախի բալիկներ» համույթները և այլ խմբեր:

Նորաստեղծ թատրոնի բացումը կկայանա 2026թ. սեպտեմբերի 15-ին Երևանում՝ հայտնի դրամատուրգ Ալեքսանդր Վոլոդինի «Բորոդայի յոթ կանայք» ստեղծագործության մոտիվներով ներկայացման պրեմիերայով: Արդեն հոկտեմբերին այս բեմադրությունը կներկայացվի «Թատերական Լոռի» միջազգային փառատոնում:

Երկու կառույցների ղեկավարների ելույթներից հետո ներկայացան թատերական խմբի շրջանավարտները, որոնք տարբեր մասնագիտությունների տեր են, սակայն առավել ոգևորված են թատրոնով, երազում են ճանաչված դերասան դառնալ, ու արդեն կա նման հնարավորություն: Հայտնեցին շնորհակալություն, որ ունեցել են նման հնարավորություն՝ մտնելու թատերական աշխարհ: Երիտասարդ դերասաններից Պավելն ասաց՝ կաշխատեն նվիրումով: Մասնագիտությամբ Անահիտը լրագրող է, բայց միշտ հավատացել է՝ դերասան է դառնալու: Զրույցի ընթացքում ԵՊՀ կրոնական զբոսաշրջություն մասնագիտության շրջանավարտ Նազելի Ավետիսյանը, որը Զավախքից է, ասաց՝ զուգահեռաբար մասնակցել է նաև թատրոնի դասընթացներին և առավել գերադասում է թատրոնը: Իսկ Երևանի պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի շրջանավարտ Նազանի Գալստյանը, որը Վայքից է, ասաց՝ մանկության երազանք է՝ դերասան դառնալը: Հանդիպման վերջում եղավ նաև հյուրասիրություն:

Զոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ՓՐԿՕՂԱԿ

ԵՐԲ ՈՒԶՈՒՄ ԵՍ ԱՊՐԵԼ

Մարդուն կյանքին կապող միջոցները տարբեր են ու բազմազան: Մեկն ապրում է հանուն վաղը աշխարհ եկող իր շարունակության, մյուսը՝ հանուն իր զավակների ապագայի, ոմանք՝ հանուն իրենց երազանքների կատարման, ոմանք էլ՝ թոռ ու ծոռանը գուրգուրելու ու վայելելու համար: Կյանքը գնահատող մարդը երբեք չի կորցնում իր հավատը և միշտ էլ գտնում է իր ապրելու իմաստը: Հուսահատ ու երերուն հոգիները շուտ են անձնատուր լինում ու ընկղմվում կյանքի հորձանուտը: Ուժեղ մարդիկ միշտ էլ գտնում են ապրելու հնարը:

2023-ի բռնի տեղահանությունից հետո բոլորս դարձել էինք կորստի ու ցավի ծովի մեջ ակամա տարուբերվող մի անղեկ նավակ: Թվում էր՝ այդ սև ու մութ ծովի մեջ պիտի օրորվեինք անընդհատ՝ փրկության ափ չգտնելով:

Երկար ու ծանր մտածումներից հետո աստիճանաբար սկսում էր բացվել Լույսը, ու երևում էր լուսաշող Արևը՝ իր ջերմագին ու ամոքիչ ճառագայթներով:

Սկսեցի հետ նայել ու փորձել գտնել կյանքիս ամենաբաղձալի՝ ուսանողական տարիների իմ ընկերներին, որով փորձ էի անում կյանքին կապվել երիտասարդական անմոռաց ու քաղցր հուշերով: Այդ ժամանակ կապս Արցախի Շահումյանի շրջանի ընկերուհիներից մեկի՝ Էլզայի հետ էր, որը տեղահանությունից հետո առաջին զանգողն էր ու իմ ընտանիքով հետաքրքրվողը, նաև առաջին ձեռք մեկնողը:

Առաջին օրերի ու ամիսների հոգուս ցավը մեղմում էի նրա հետ հանդիպումների ընթացքում, չնայած ինքն էլ 2020 թվականի 44-օրյա պատերազմի հետևանքով երրորդ անգամ էր տեղահանվել:

Հետո ծնվեց մեր ընկերներին որոնելու ու գտնելու գաղափարը: Ուզում էի միավորել բոլորին՝ միասին ապրելու համընդհանուր ցավը: Դժվարին որոնումների արդյունքում գտանք ևս չորսին՝ Անժելային, Նաիրային, Պալինային ու Սվետային:

Որոշեցինք մեր ծանր վիշտը խեղդել Հայաստանի գեղատեսիլ բնության մեջ՝ գողտրիկ անկյուններում անթեղելու մեզ այրող կրակի լեզվակները:

Արշավի տոմսեր ձեռք բերելով՝ մի լուսապայծառ առավոտ հավաքվեցինք վեց հոգով ու բռնեցինք Հառիճավանքի ճանապարհը, այնտեղից էլ՝ Գյումրիի տեսարժան վայրերը:

Արշավի ընթացքում մեր ցավալլուկ հոգիները խաղաղվում էին միմիայն վանքերի ու եկեղեցիների պատերի ներսում, երբ մոմ էինք վառում ու աղոթում կորուստների ու եղածի փրկության համար: Այդ վայրերը մեզ ուժ էին տալիս ու ապրելու իմաստ հաղորդում:

Գնալով ավելի էին ամրապնդվում մեր կապերը, ու մենք մեր փրկությունը տեսնում էինք այդ հանդիպումներում, որոնք մեզ նոր լիցք էին հաղորդում, տպավորություններն անմոռաց դարձնում և հաջորդ հանդիպման փափագով լցնում:

Որոնումների ճանապարհին գտնում էինք նաև մեր մյուս համակուրսեցիներին (10 հոգի), որոնց այս անգամ իրենց հարկի տակ են հյուրընկալում գեղեցիկ և ամուր ընտանիք կազմած մեր կուրսի երկու ամուսինները՝ Օլեգը և Էլմիրան: Հուշերի ու քաղցր հիշողությունների ժապավենները ժամերով ձգվում էին մեր աչքի առջև, ու չէինք հագենում… Հուշերը մեզ տեղափոխում էին անցյալ դարի 70-ական թվականները, երբ մենք անհոգ երիտասարդներ էինք, ու կյանքն էլ ուրիշ էր:

Հեռախոսազանգերով շարունակ տեղեկանում էինք մեր մյուս ընկերների մասին ու անընդհատ առիթներ փնտրում՝ նորանոր հանդիպումների համար: Հետո լսում ենք, որ նրանցից մեկը հիվանդ է, շտապ հավաքվում ու այցելու ենք նրան: Մեկը հիվանդանոցում է (վիրահատել էին), անմիջապես տեղեկացնում ենք իրար ու մեկնում հիվանդանոց:

Այսպես և՛ մեր շարքերն էին թանձրանում, և՛ հարաբերությունները՝ ավելի ջերմանում: Ընթացքում ցավով լսում էինք մեր որոշ ընկերների մահվան մասին, նրանց համար աղոթում և մոմ էինք վառում եկեղեցում:

Իսկ ես շարունակում էի ընկերներիս որոնումները, ու, ահա, լրիվ պատահական մի տեսանյութի տակ կարդում եմ հերթական մեկնաբանության հեղինակի անուն-ազգանունը՝ Կարինե Բալայան, որին ես վաղուց էի փնտրում, ու ներքին մի զգացողություն ինձ հուշում է, որ նա մեր կուրսեցին է: ՖԲ-ում գտնելով նրա էջը՝ գրում եմ հետևյալ հաղորդագրությունը. «Եթե Դուք 70-ականներին սովորել եք Արցախի մանկավարժական ինստիտուտում, արձագանքեք»: Արձագանքը չի ուշանում. «Բարև, իմ սիրելի ընկերուհի, ես էլ նոր քո հոդվածն էի կարդում, բայց ազգանունդ չէի հիշում, որ համոզվեի՝ դու ես»: Անմիջապես զանգում ու հաստատում ենք մեր ինքնությունը: Նա էր՝ մեր կուրսի աշխույժ ու կենսախինդ Կարինեն, որին տարիներն անզոր են եղել անճանաչելի դարձնել:

Դա 2026 թվականի ապրիլին էր: Տխրեցի, երբ իմացա, որ բնակվում է արտերկրում. մտածում էի՝ դժվար հանդիպենք: Օրվա մեջ մի քանի անգամ զանգում էր իմ գտածո Կարինեն, որը կարոտից չէր հագենում: Հայտնում է, որ Հայաստան գալու մտադրություն նախապես չի ունեցել այս տարի, սակայն իրար գտնելուց հետո որոշել էր, որ անպայման գալու է հայրենիք և իր շուրջն է համախմբելու բոլոր համակուրսեցիներին. դա իր համար լինելու էր ամենամեծ երջանկությունը:

Ուրախացած զանգեցի ՀՀ-ում գտնվող մեր մյուս ընկեր-ընկերուհիներին ու հայտնեցի բաղձալի լուրը. «Կարինեն Երևան է գալու հուլիսի 22-23-ին, ու կայանալու է բոլորիս նոր հանդիպումը»:

Անհամբեր երեխաների պես սկսեցինք հաշվել ամիսները, շաբաթները, հետո՝ օրերը…

Դա մեզ նոր, երջանիկ օրվա, ապրելու լիցք էր հաղորդում: Սպասումը դառնում էր մեր ցավոտ կյանքի առաջնորդիչ ուժը, իսկ կարոտի ծովի սահմաններն ավելի էին ընդարձակվում: Այդ կարոտաբաղձ հանդիպմանը ավելի ընդգծված, զգացմունքային, հուզումնալից ելևէջներով էր սպասում մեր ընկերուհիներից մեկը՝ Եվգենյան (բոլորս էլ սպասում էինք՝ բայց մեր զգացմունքները չարտահայտելով), որը երեխայի պես անընդհատ դժգոհում էր, թե ինչո՞ւ են օրերը, ժամերը գնալով երկարում: Զանգում էր ամեն օր. վախենում էր ինչ-որ բանից, վախենում էր, որ չենք հասցնի վայելել այդ օրը: Տարիքն այդ մտավախություններն առաջացնելու սովորություն ունի հատկապես այն ժամանակ, երբ բռնում ես կյանքի մայրամուտի՝ վայրէջքի ճամփան:

Մոտենում էր նախատեսված հանդիպման ժամանակը՝ ավելի ևս անհամբեր դարձնելով բոլորիս:

Վերջապես, հուլիսի 23-ին Կարինեի ինքնաթիռը վայրէջք է կատարում հայրենիքում՝ մեր գիրկը վերադարձնելով նրան: Գիշերը արթուն լուսացրեց ու վաղ առավոտյան զանգեց՝ տեսակցության հրավիրելով մեզ: Երկու հոգով նրան գտանք հյուրասենյակում… Բառերով անբացատրելի մի ջերմ հանդիպում էր դա՝ հուզախառն ակնթարթներով:

Միասին պլանավորեցինք հանդիպման վայրը, ժամանակը: Այս անգամ արդեն դարձել էինք տասնվեց հոգի. ուղղակի մեծ երջանկություն էր, որ կուրսի քսանչորս հոգուց կարողացել էինք միավորել տասնվեցին (ութ հոգի երկնային արքայության մեջ էին):

Հեռավոր մարզերից ժամանեցին մեր երկու ընկերուհիները՝ Եվգենյան և Նորան, ու 2026-ի օգոստոսի 11-ը մեզ համար դարձավ օրացուցային մի հիշարժան տարեթիվ:

52 երկար ու ձիգ տարիներ անց ցավի ու կարոտի, հայրենազրկման ու դժոխքի անլուր տառապանքները ճաշակած արցախցի տասնվեց համակուրսեցիներ գտան իրար ու ժամերի ընթացքում «ապրեցին» իրենց Արցախում:

Դրախտային ու եդեմական մի վայր էր ընտրել Կարինեն մեզ համար, որ մենք մեզ իրոք զգայինք արցախահամ ու արցախաբույր մի տարածքում: Տարիքն առած մեր «տղաներն ու աղջիկները» հոգով ու սրտով նույնն էին մնացել. նույն համերաշխ կոլեկտիվը, նույն համախմբվածությունը:

Բոլորը մեկ-մեկ ներկայացրին իրենց կյանքի կարևոր դրվագները: Բոլորն էլ դարձել են հայրենիքի ու հասարակության համար պիտանի ու նվիրյալ քաղաքացիներ՝ պահպանելով իրենց մարդկային ու արժեքային համակարգը, նվաճելով իրենց հասանելի բարձունքները: Անկեղծ ու մտերմիկ մթնոլորտը գնալով ավելի էր ջերմանում, երբ լսում էինք մեկս մյուսի պատմությունները՝ երբեմն ցավոտ, երբեմն ոգևորիչ շեշտերով:

Ուշադրության կենտրոնում Կարինեն էր, քանի որ այդ հիշարժան ու անմոռաց օրվա «մեղավորը» ինքն էր: Անցավ չի եղել նաև նրա կյանքը: Երիտասարդ տարիքում կորցրել է հայրենասեր ու նվիրյալ բժիշկ ամուսնուն, որն իրեն պարգևել է չորս դուստր: Ուսանողական տարիների այդ փխրուն աղջկան կյանքը ծանր բեռ է բաժին հանել: Աստծո տանը ապավինած, դիմակայելով բոլոր դժվարություններին՝ թրծվել է կյանքի բովում ու դարձել ուժեղ կին՝ չկորցնելով իր կանացի հմայքը: Շատ երջանիկ է նա իր դուստրերով: Նրանց ուղարկել է իրենց երազանքների ետևից, որոնք այդ արժանավոր ընտանիքի հարազատ զավակներ են դարձել և որոնց համար մայրը մնացել է որպես պաշտամունքի առարկա:

Դժվար է բառերով արտահայտել այն ապրումներն ու զգացողությունները, որ մենք ունեցանք այդ հանդիպման ընթացքում: Դա ևս մի կարևոր առիթ էր՝ կյանքին կապված մնալու ու վաղվա հույսը չկորցնելու համար:

Արցախի կորստի ցավը չի կարելի համեմատել ուրիշ ցավի հետ, և չնայած դրան, այնուամենայնիվ, մենք այդ օրն ուրախ ու շատ երջանիկ էինք (յուրայիններով մեղմում էինք մեր հոգու ցավը):

Երանի նրանց, որ ապրում են միշտ կյանքին սիրահարված, նրանց, որ ապրում են միշտ՝ ապրելու տենչը ուսերին առած…

Իրավացի էր մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցը, երբ գրում էր այս տողերը.

Էլի գարուն կգա, կբացվի վարդը,
Սիրեկանը էլի յարին կմնա:
Կփոխվին տարիքը, կփոխվի մարդը,
Բլբուլի երգն էլի՛ սարին կմնա:

Թող բոլորն էլ կյանքին կապող մի օղակ ունենան:

Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

«ԵԿԵԼ ԵՄ ՔՆԱՐՈՎՍ...»

Իմ էջերում ես թափանցիկ եմ՝ անշողարշ ու անպատյան, վճիտ և հասանելի: Այստեղ իմ մտորումներն են՝ իմ ներքին պայքարներով, պարտություններով ու հաղթանակներով: Իմ ներքին կշռույթն է, իմ անխարդախ պարունակությունը՝ դրված նախ Տիրո՛ջ, ապա՝ ի՛մ և քո՛ զոհասեղանին: Ես չե՛մ ամաչում իմ անկումների, հոգևոր ու հոգեկան վայրիվերումների և իմ վերելքների մասին խոսելուց: Եվ, միանշանակ, անկեղծությունն է, որ ուժ ու կշի՛ռ է տալիս ցանկացած խոսքի և գործի: Դա այն ոսկե բանալին է, որ ուղեկցում է ընթերցանության կանաչ ու անխոտոր ճանապարհներով:

Գեղանուշ Աբրահամյան

Երբ հավաքվում են մոտիկ ու մտերիմ մարդիկ, հարազատներն ու գաղափարակից ընկերները, նշանակում է՝ կարևոր իրադարձություն է ակնկալվում, քանզի այդ միջավայրում են հնչում անկեղծ ու անաչառ գնահատականները, արժանի խոսքերը, որտեղ հոգիդ պարուրվում է ջերմ ու թափանցիկ զգացմունքներով, ու նրանց գնահատականները դառնում են չափանիշ՝ արածիդ ու զգացածիդ, նաև անելիքիդ մասին: Ավելին, կյանքիդ էջերը թերթելիս համոզվում ես, որ նրանք կարևոր դեր են ունեցել քո կյանքում, ու միշտ ձգտում ես այդ ակունքից ծարավդ հագեցնել…

Այս անգամ ևս առիթը իրադարձային էր. հայկական Սփյուռքից՝ Չեխիայից ժամանած արցախցի բանաստեղծուհու՝ Գեղանուշ Աբրահամյանի երկրորդ գրքի՝ «Եկել եմ քնարովս…» բանաստեղծությունների ժողովածուի շնորհանդեսն էր:

Համահայկական գրողների միության նախագահ Աբգար Ափինյանը, որը միջոցառման նախաձեռնողն ու կազմակերպիչն էր, ողջունելով ներկաներին, անդրադարձավ բանաստեղծուհու կերպարին, որը ժամանակակից գրականության պայծառ դեմքերից է, որ բարձր է պահում հայության պատիվը, ով մեր սրտից է խոսում, ով ջուր է խմել հայոց աղբյուրներից, ում ձայնը հայկական նվագներ է հիշեցնում, և այսօր նրա երկրորդ գրքի շնորհանդեսն է: Գրականությունը երկու թևեր ունի՝ գրող և ընթերցող. թռիչքը հաջողվում է երկու թևերի համաժամանակյա ճախրանքով:

Ամեն նոր գիրք յուրովի անակնկալ է ընթերցողների ու մտերիմների համար, իսկ անսպասելի անակնկալը դառնում է բուռն զգացմունքների ալեկոծ մի ծով, որը գոյանում է դահլիճի պատերից ներս: Պարզվում է, որ Գեղանուշ Աբրահամյանի «Եկել եմ քնարովս…» նոր ժողովածուն նվիրված է իր մայրիկին՝ Կարինե Բալայանին, որը հանկարծակիի եկած՝ չէր կարողանում զսպել հուզմունքն ու արցունքները:

Հնչում է Գեղանուշի՝ ականջ շոյող, փաղաքուշ ու քաղցր խոսքը. «Գիրքը նվիրում եմ մայրիկիս՝ Կարինե Բալայանին: Անգին մորս, որն իր ո՛ղջ կյանքում ինքնամոռաց սիրո բացառիկ օրինակ է մեզ և շրջապատի համար: Թող քո սիրո բուրվառը բոցավառվի, և անուշաբույր էությունդ ձգտի կատարելության: Իմ ստեղծագործությունների այս փունջը նվիրում եմ քե՛զ, գա՛նձս, հուսալով, որ այն կբալասանի, կշոյի քո միտքը, կթափանցի հոգուդ տիեզերքը և բերկրել կտա… Երախտապա՛րտ եմ քեզ՝ իմ ողջ սրտով, Մամ…»:

Դահլիճի բուռն ծափահարությունները մայրական ջերմ ու անկեղծ սիրո գնահատանքի վկայությունն են դառնում:

Աբգար Ափինյանը, մեջբերելով Աղասի Այվազյանի նշանավոր միտքը, թե տաղանդը գեղարվեստական խառնվածք է, նշեց, որ Գեղանուշը, իրոք, գեղարվեստական խառնվածք ունի, ու ներկայացրեց Համահայկական գրողների միության վարչության որոշումը, որով բանաստեղծուհի Գեղանուշը դարձել է այդ միության լիիրավ անդամ, ու անդամատոմսը հանձնեց նրան:

Աբգար Ափինյանն իր անթաքույց սերն արտահայտեց առ Արցախ ու արցախցի և վստահ հայտարարեց, որ հայ լինել՝ նշանակում է սիրել Արցախը. չսիրեցիր Արցախը՝ փնտրիր ուրիշ երամ…

Էկրանից հանդիսատեսին են ներկայանում Արցախի արժանավոր զավակներն իրենց նշանավոր գործերով՝ արցախյան «Հորովել»-ի սրտակեղեք հնչյունների ներքո:

Անժելա Գաբրիելյանը, օգտագործելով այդ օրվա հաճելի առիթը, անդրադարձավ բանաստեղծուհու աստվածահաճո պոեզիային, որը իր սուրբ պարտքն է համարել երկրորդ գրքի ծնունդը նշել Մայր հայրենիքում, որով կամրջել է Սփյուռքը և Հայրենիքը: Դա իրականություն դարձավ Ա.Ափինյանի շնորհիվ, որը հայտնի է իր լավ ու բարի գործերով: Ազնիվ մտավորականի իր լուսե ու ժայռեղեն կերպարով նա միշտ կանգնած է բարձր արժեքներ կրողների կողքին: Դիմելով Գեղանուշին՝ Անժելա Գաբրիելյանը շարունակեց. «Գեղեցիկ և Անուշ. ինչքան ճիշտ ընտրություն են կատարել քո երանելի ծնողները՝ տալով քեզ այդ սքանչելի անունը: Պոեզիան սրտի լեզու է, և Գեղանուշն իր ընթերցողի հետ խոսում է սրտի լեզվով: Նրա պոեզիան ծնվում է այն լռությունից, որտեղ աղոթքն է հնչում, ծնվում է այն անսահման կարոտից, որ հեռու հեռվից թևում են դեպի Հայրենիք, այն ցավ ու մրմուռից է ծնվում, որ ապրել է նա հայրենի Արցախը կորցնելուց հետո: «Եկել եմ քնարովս…» գրքում հեղինակն անդրադարձել է տարբեր թեմաների՝ սեր, հայրենիք, անհատի ճակատագիր, ներքին ապրումներ, Աստծո փառաբանություն և այլն: Գրքի էջերում ամփոփված են հեղինակի անսահման սերը, անսասան հավատը, անպարագիծ բարությունը:

Քնարական հերոսը եկել է սրտերից փուշ հանելու, ցաված սրտերը մխիթարելու, եկել է հոգևոր սնունդ տալու ընթերցողին, բուռ-բուռ լույս ու բարություն է բերել՝ բաժանելու համար.

Ի՞նչ է ուզածս. որ միշտ մարդ մնամ,
Որ չաղտեղանա պատկերս բնավ,
Որ իմ ժպիտը միշտ ինձնից առաջ՝
Ողջույնիս տեղակ՝ բարի լույսը տա:
(«Ի՞նչ է ուզածս…»)

Պոետն իր խոհերով մերժում է սուտը, կեղծիքը. նա փորձում է մեկտեղել իղձն ու իրականությունը: Չպետք է ծնկել դժվարությունների առաջ, այլ աշխարհը շուռ տալ ծնկի վրա…

Գեղանուշ ջան, թող խոսքդ միշտ ծառայի առաքելությանդ: Ստեղծագործական բարձր թռիչք եմ մաղթում քեզ»:

Հնչում է բանաստեղծուհու թավիշ ասմունքը («Սեր մայրս…»).

Քո ձեռքերը՝ ամենանուրբ,
Քո մատները՝ հրաշագործ,
Քո պաշտոնը՝ անժամկետ,
Քո կերպարը՝ գեղեցկագույն:
.....
Դու՝ ջերմության անսպառ մարտկոց,
Դու՝ իմ արև ձմռան ցրտում,
Դու՝ երգ ու սեր՝ տրտում հոգուն,
Դու՝ գեղեցկի արար փայլուն…:

Բանաստեղծներն են այն առաքյալները, որ պիտի վառեն համազգային ջահը ու իրենց շուրջը համախմբեն բոլորին. այս կարծիքին է Աբգար Ափինյանը:

Գեղանուշի քեռին՝ Կիմ Բալայանը, որ հայտնի է քաղհասարակության մեջ, չթաքցնելով իր հիացմունքն ու հուզմունքը, նշեց, որ շատերին չի հաջողվում լավ ինքնարտահայտվել, Գեղանուշին դա հաջողվել է: Ուրախ ու հպարտ է նրա համար:

Բանաստեղծուհի Սուսաննա Ղազարյանը, որի ստեղծագործությունները վերաբերում են Արցախին, և ինքն էլ արդեն ճանաչված է գրական կյանքում, Գեղանուշ Աբրահամյանի մասին այսպես արտահայտվեց. ««Եկել եմ քնարովս…» գրքի միջոցով հեղինակը բացում է իր հոգու ծրարը, ու այնքա՜ն անկեղծ է, այնքա՜ն թափանցիկ ու մաքուր՝ Արցախի սարերից հոսող վճիտ ջրերի պես, որ մենք էլ ենք հայտնվում այդ գեղեցիկ ծրարի մեջ ու սկսում թևածել այնտեղ: Գրողները լույս են սիրում ու լույս են սփռում իրենց շուրջը: Նրա տողերում ցավ ու կսկիծ էլ կա, որ կապված է նրա հայրենազրկության հետ: Ես ուզում եմ, որ այլևս հայը չզգա այդ մեծ ցավը: Հայրենիքից հեռու մարդու սիրտն ավելի է մոտենում Հայրենիքին: Պատահական չեն ծնվել այս տողերը.

Արցախում հոգի՛ս եմ թողել,
Թողել եմ հուշերս հազար,
Արցախում իմ սի՛րտն եմ թողել
Ու օրերս՝ անգի՜ն ու բերկրանք…
(«Արցախս»)

Բարի երթ եմ մաղթում բանաստեղծուհուն»,- ավարտեց իր խոսքը Սուսաննա Ղազարյանը:

Գեղանուշի բժիշկ քեռին՝ Կառլեն Բալայանը, շնորհավորելով իր զարմուհուն, մաղթեց ստեղծագործական նոր թռիչքներ, որպեսզի ընթերցողները հարստացնեն իրենց աշխարհը:

Գրչակից ընկերներից երիտասարդ բանաստեղծուհի Հռիփսիմե Ասատրյանը, որի երկու ժողովածուներն էլ արժանացել են բարձր մրցանակների ու ճանաչվել տարվա լավագույն գիրք, ողջունելով ներկաներին, շնորհավորեց Գեղանուշին ու նրա մայրիկին՝ այդ կարևոր իրադարձության համար՝ ընդգծելով, որ Համահայկական գրողների միությունը Սիրո ընտանիք է, որին անդամագրվել է նաև Գեղանուշը: «Ինձ շատ հոգեհարազատ է Գեղանուշի պոեզիան,- ավելացրեց նա.- կարդալով նրան՝ ինձ թվում էր, թե հարյուր տարի արդեն ճանաչում եմ նրան: Իր գրքի մեջ ես տեսա ոչ միայն ընբոստ հայրենասերին, եռանդուն մայրապաշտին, այլ նաև խոնարհ հոգուն, որ Աստծո արքայության զարդն է:

Մարդկային կատարելությունը, ի վերջո, ամփոփվում է աստվածային կատարելության մեջ: Նա բոլորին կոչ է անում ինքնամաքրման աղերս ունենալ իրենց մեջ: Մենք պետք է մեր աստվածային շնորհները ի բարին օգտագործենք.

Գեղանուշի պոեզիայի զարդը նրա զղջման, ապաշխարանքի արցունքն է…: Բարի գալուստ մեր միություն»:

Գրականության հաղթանակն այն է, երբ սրտերը հալվում են ու կպչում իրար, հազար հոգին դառնում է մեկ, դառնում բանակ, և ոչ ոք չի ուզում շեղվել ընդհանուր կամքից. այս մտքին է Աբգար Ափինյանը: Նա հավատում է, որ բոլոր հայերը կարող են միասնական լինել և ունենալ մեկ կարծիք: Երբ հանճարեղ Համո Սահյանին հարցրել են՝ ի՞նչ է նշանակում բանաստեղծ, երկար մտորելուց հետո պատասխանել է՝ պարզապես լավ մարդ:

Բանաստեղծուհու համակուրսեցի Սիրուն Ավետիսյանն այսօր շատ հպարտ է, որ ունի նման ընկերուհի, որի յուրահատուկ լինելը զգացել էր դեռևս ուսանողական տարիներին: Նրան արդեն ծանոթ է բանաստեղծուհու առաջին ժողովածուն՝ «Հոգուս խնկամանից», որը նվիրված էր իր երջանկահիշատակ բժիշկ հորը՝ Յուրի Աբրահամյանին, սիրով կընդունի նաև «Եկել եմ քնարովս…» ժողովածուն:

«Ավետիս-Արտ» արվեստի միջազգային միության անդամ, Գեղանուշի գրչակից ընկերուհի Աստղիկ Սահինյանը, շնորհավորելով գրքի ծնունդը, միության հիմնադիրի և գործադիրի անունից բանաստեղծուհուն հանձնեց այն պարգևները, որ նա վաստակել է բոլոր գիտաժողովներին հեռավար մասնակցելու համար. հավաստագրեր՝ «Ոսկե գրիչ» մրցանակ, «Ավ.Իսահակյան-150. խոսքը՝ որպես մեղեդի» գիտաժողովին մասնակցելու և թեմատիկ ստեղծագործություն ներկայացնելու համար, «Քրիստոնեության 1725-ամյակին նվիրված գիտաժողովին մասնակցելու, մշակութային արժեքների պահպանման ու տարածման գործում զգալի ավանդի համար», «Թումանյան. հավերժական արժեքներ» գիտաժողովին մասնակցության և գրական-մշակութային արժեքների պահպանման համար, պատվոգիր՝ «Ակտիվ ստեղծագործական գործունեության համար և «Ավետիս-Արտ» արվեստի միջազգային միության հետ արդյունավետ գործունեության համար»:

Պարգևները հանձնելուց հետո Աստղիկ Սահինյանը ասմունքեց Գեղանուշի «Ապրել» բանաստեղծությունը.

ԱՄՆ հայ գրողների և լրագրողների միության անդամ Ռուզաննա Խաչատրյանը ևս ողջունեց բանաստեղծուհու նոր գրքի ծնունդը, հանձնեց միության պատվոգիրը և ստեղծագործական նոր վերելքներ մաղթեց:

Պրահայի կիրակնօրյա դպրոցում Կարինե Բալայանի հետ միասին հայապահպանության սուրբ առաքելություն իրականացնող Սոնա Ստեփանյանը շնորհավորեց Գեղանուշին՝ նոր գրքի առթիվ՝ ավելացնելով, որ Կարինեի հայտնվելն այդ դպրոցում նոր շունչ է հաղորդել իրենց գործունեությանը:

Ըստ գրող Սլավիկ Միքայելյանի, որը ևս գնահատանքի խոսք հնչեցրեց օրվա գրքի հասցեին՝ նշեց, որ լավ գիրքը մարդուց երկար է ապրում, և այն շատ կարևոր է մանավանդ այսօրվա՝ անորոշ տագնապներով ու հոգեբանական անկումներով լի ժամանակաշրջանում:

Վերջում Գեղանուշը շնորհակալություն հայտնեց բոլորին՝ իրենց թանկ ներկայության ու գնահատանքի համար:

Գեղանուշ Աբրահամյանի այս գիրքը իր հետ թարմության նոր շունչ է բերում: Ընթերցողն այնտեղ կարող է գտնել իր որոնած լույսն ու ջերմությունը, սերն ու հոգու խաղաղությունը: Շնորհալի բանաստեղծուհու ապագան խոստումնալից է ու լուսաշող:

«Եկել եմ քնարովս…»: Բարո՜վ ես եկել, սիրառատ դուստր հայոց Արցախի, շարունակիր սփռել լույսդ այս մութ աշխարհում, որ վիատ ու ծանծաղ հոգիները չխարխափեն համատարած խավարում: Հնչեցրու՛ հպարտ խոսքդ մայրենի, որ օտար ափերը ցնծան քո ձայնից:

Թող ծիածանվի գալիքդ լուսե, ու անուշաբույր վարդեր փռվեն քո կանաչ ճամփին:

Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ

ՎԵՐԱՊՐՈՒՄ

ԴԵՌԱՀԱՍԻ ՀՈՒՇԵՐ

Իննա ԹԱՐԱՆՅԱՆԸ ծնվել է 2015 թվականի ապրիլի 16-ին՝Ստեփանակերտ քաղաքում:

Նա իր կրթության առաջին երկու դասարաններն սովորել է Ստեփանակերտի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 1 հիմնական դպրոցում:

2022 թվականին ընդունվել է Ստեփանակերտի Կոմիտասի անվան երաժշտական դպրոց՝ դաշնամուրի և ջութակի բաժիններ:

2023 թվականին, պատերազմական իրադարձություններից հետո, ընտանիքի հետ տեղափոխվել է Արարատի մարզի Մասիս քաղաք:

Այստեղ նա շարունակել է ուսումը Մասիսի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոցում: Միաժամանակ շարունակել է նաև երաժշտական կրթությունը՝ սովորելով Ա. Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոցում՝ դաշնամուրի և ջութակի դասարաններում:

Ներկայումս Իննան սովորում է 6-րդ դասարանում և երազում է դառնալ գրող:

Դժոխքի առաջին ակնթարթը.
սեպտեմբերի 27.2020թ.

2020թվականի սեպտեմբերի 27-ին խաղաղ ու արևոտ առավոտը Ստեփանակերտում վայրկյանների ընթացքում վերածվեց մղձավանջի: Ես դեռ քնած էի, երբ օդը ճեղքող արկերի ու պայթյունների խուլ ու ահարկու ձայնը սթափեցրեց ինձ: Ցնցումից վեր թռա տեղիցս, սիրտս արագ բաբախում էր վախից: Մայրս ինձ տեսնելուն պես ամուր սեղմեց իր գրկում, նրա մարմինը դողում էր, իսկ աչքերից անդադար արցունքներ էին հոսում: Նա շփոթված էր ու հուսահատ, քանի որ այդ պահին ոչ մեկը չգիտեր՝ ինչ անել, ուր փախչել կամ ինչպես պաշտպանվել: Մեր անհանգստությունն ու վախը կրկնապատկվում էր, որովհետև հայրս աշխատանքի էր, իսկ կապի միջոցները վայրկյանների ընթացքում անհետացան՝ մեզ թողնելով լիակատար տեղեկատվական խավարի ու անորոշության մեջ: Չկարողանալով հայրիկից ոչ մի լուր ստանալ՝ հարևանների հետ միասին շտապեցինք դեպի շենքի նկուղը, որն այդ պահից սկսած պիտի դառնար մեր ապաստարանը: Այնտեղ՝ նկուղի մութ ու սառը պատերի ներքո, ամենուրեք լսվում էին սրտաճմլիկ լաց, կոծ ու խելակորույս աղաղակներ: Կանայք ու երեխաները սարսափած փարվում էին միմյանց: Իսկ դրսում երկինքը լեփ-լեցուն էր թշնամու անօդաչու թռչող սարքերով, որոնք անդադար պտտվում էին քաղաքի վրայով և իրենց մահաբեր կրակը թափում անմեղ ու խաղաղ բնակչության գլխին...

Ճանապարհ դեպի անհայտություն

Ստեփանակերտից հեռանալիս ճանապարհը մեզ բերեց Արտաշատ: Ամեն ինչ օտար էր, անծանոթ ու անորոշ: Այդ առաջին օրը մենք պատսպարվեցինք մի տան մեջ, որտեղ ապրում էր միայնակ մի կին: Նա սիրով ու հոգատարությամբ ընդունեց մեզ՝ տրամադրելով իր հարկը մեկ գիշերվա համար: Այդ գիշեր, թեև երկինքը խաղաղ էր ու չէին լսվում արկերի պայթյունները, մեր սրտերում, միևնույն է, տագնապն ու տան կարոտն էին խոսում: Հաջորդ առավոտյան մենք շտապեցինք քաղաքապետարան՝ փորձելով հասկանալ, թե ուր պետք է գնանք և ինչպես ենք կազմակերպելու մեր հետագա կյանքը: Մեզ ընդունեց քաղաքապետը: Լսելով մեր պատմությունը և տեսնելով մեր վիճակը՝ նա հայտնեց, որ Ազատավան գյուղում կա մի ազատ տուն, որտեղ կարող ենք հանգրվանել: Այդ լուրը մեզ համար հույսի մի նոր կայծ էր: Առանց ժամանակ կորցնելու մենք ճանապարհ ընկանք դեպի Ազատավան՝ դեռ չպատկերացնելով, թե ինչպիսի ջերմություն ու թանկ հիշողություններ են մեզ սպասում այդ գյուղում... ճանապարհին ես հիշեցի Արցախը. ինչքա՜ն մաքուր ու գեղեցիկ էր Արցախը: Հիշում էի ինչպես եմ հորս ու մորս հետ ամեն կիրակի գնում եկեղեցի, որն անվանում են Սուրբ Աստվածածին մայր տաճար: Ես նաև հաճախում էի Հեքիմյանի Սբ Հակոբ եկեղեցին, որտեղ հենց հիմա էլ կցանկանայի լինել: Հետո հիշեցի Տատիկ-Պապիկ հուշահամալիրը, որի անվանումն է՝ «Մենք ենք մեր սարերը»: Այն կառուցվել է 1967թ., հիշեցի արձանը, որի տակ ես միշտ սիրում էի քայլել: Ես կարոտել եմ ԼՂՀ-ի հրապարակը, որտեղ ամեն Մայիսի 9-ին կար զինվորական շքերթ, ամեն Նոր տարում կար տոնական համերգ: Քաղաքի բոլոր տոնական միջոցառումներն անցկացվում էին այստեղ՝ Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում:

Ապաստանն Ազատավանում
և վերադարձի հույսը

Ազատավանում մեզ հյուրընկալեց մի շատ բարի ու սրտացավ ընտանիք՝ Վահե և Գայանե Աշիկյանների ընտանիքը: Նրանք ապրում էին մի մեծ ու հյուրընկալ տան մեջ, որի դռները սիրով բացեցին մեր առջև: Այդ օտար, բայց արդեն հարազատ դարձած հարկի տակ մենք ապրեցինք մոտ երկու ամիս: Դա մի ժամանակաշրջան էր, երբ ամեն վայրկյան մեր սրտերում կռիվ տվող տագնապը խառնվում էր տանտերերի ջերմության հետ:

Այդ մեծ տանը մի հին դաշնամուր կար: Պատերազմի տագնապներից ու ծանր լուրերից մի պահ կտրվելու համար ես ու միջնեկ եղբայրս հաճախ էինք մոտենում այդ դաշնամուրին՝ նվագելու: Երբ մեր մատները դիպչում էին ստեղներին, թվում էր, թե երաժշտության հնչյունները ցրում են պատերազմի մղձավանջը, ու մենք կայացրինք մեր կյանքի ամենակարևոր որոշումներից մեկը՝ նորից ետ գնալ Արցախ: Թեև վերքերը դեռ թարմ էին, իսկ ապագան՝ անորոշ, բայց մեր տունը, մեր արմատներն ու մեր հոգին այնտեղ էին՝ լեռների գրկում, և մենք ուզում էինք վերադառնալ մեր սրբազան հողը՝ նորից շենացնելու հավատով...

Վերադարձ տուն

Վերքերով լեցուն, բայց հարազատ մեր Ստեփանակերտը... Երբ վերջապես հասանք Ստեփանակերտ ու մոտեցանք մեր տանը, սիրտս սկսեց արագ բաբախել: Երկու ամսվա պատերազմն ամենուր իր դաժան հետքն էր թողել: Մտնելով տուն՝ ցավից սիրտս սեղմվեց. պատերը վնասված էին ու ջարդված, պատուհանների ապակիները՝ փշրված, իսկ մեր սիրելի իրերն ու կահույքը ծածկված էին հաստ փոշու շերտով: Թվում էր, թե ժամանակն այստեղ կանգ էր առել հենց սեպտեմբերի 27-ի այն սարսափելի առավոտյան: Բայց այդ ավերածությունների մեջ ես մի անկրկնելի զգացողություն ապրեցի: Հոգուս մեջ իրար խառնվեցին խորը հուզմունքն ու անսահման ուրախությունը: Դա մի յուրահատուկ հույսի ցնծություն էր, որովհետև, չնայած կոտրված պատերին ու փոշուն, ես նորից տանն էի: Մենք ողջ էինք, մեր ընտանիքը նորից միասին էր իր հարազատ հարկի տակ: Ազատավանում ինձ նվիրած փոքրիկ պայուսակը ես խնամքով տեղավորեցի իմ սենյակում՝ որպես մեզ ձեռք մեկնած բարի մարդկանցից մնացած անմոռաց հուշ: Շուտով կյանքը քաղաքում սկսեց դանդաղ, բայց հաստատուն քայլերով վերակենդանանալ: Մենք նորից գնացինք դպրոց, հանդիպեցինք մեր ընկերներին ու հարևաններին: Բոլորի դեմքին պատերազմի թողած հոգնությունն էր, բայց և առաջ նայելու կամքը:

Մարգարեական երգը: Վերջին տագնապն ու նոր հանգրվանը

2023 թվականի սեպտեմբերի 19-ը սովորական դպրոցական օր էր, բայց օդում կախված էր անհասկանալի մի ծանրություն: Երբ դասերն ավարտվեցին, տատիկս եկավ ինձ դպրոցից վերցնելու, որպեսզի գնանք իրենց տուն: Ճանապարհին հոգիս անհանգիստ էր. հանկարծ, ինքս էլ չգիտակցելով թե ինչու, սկսեցի մի շատ տխուր երգ երգել: Այդ մեղեդին կարծես իմ ներքին վախերի ու կանխազգացումների արձագանքն էր: Տուն հասանք: Տատիկս ինձ համար հնդկաձավար պատրաստեց, բայց ես չկարողացա անգամ մի պատառ ուտել: Կոկորդս սեղմված էր, հոգեպես վատ էի զգում, կարծես սիրտս վատ լուր էր գուշակում: Երբ տատիկս գնաց ուրիշ սենյակ, ես հյուրասենյակում մենակ մնացի: Հոգնած հենվեցի բազմոցին, աչքերս փակեցի ու մտքովս անցավ մի սարսափելի հարց. «Իսկ ի՞նչ կլինի հիմա, եթե հանկարծ նորից պատերազմ սկսվի...»: Ու հենց այդ նույն ակնթարթին, կարծես ի պատասխան իմ մտքերի, քաղաքը թնդաց: Ականջս ճեղքեց օդային տագնապի ազդանշանի ահարկու ու սարսափելի սուլոցը: Մարգարեական մի վայրկյան էր, որը մեզ նետեց իրական դժոխքի մեջ: Ես ու տատիկս սարսափած էինք: Շտապ իջանք ներքևի հարկ ու մտանք մի սենյակ, որտեղ արդեն պատսպարվել էր մեր հարևանուհին: Բոլորիս սրտերում տագնապ էր: Աչքերիցս անդադար արցունքներ էին հոսում. ես լաց էի լինում հայրիկիս, մայրիկիս ու եղբայրներիս համար, որոնցից հեռու էի ու չգիտեի՝ ողջ են, թե ոչ: Քիչ անց, երբ քույրս էլ եկավ ու միացավ մեզ, սիրտս մի փոքր հանգստացավ: Մենք տեղափոխվեցինք նկուղ, որը թեև տան ներսում էր, բայց այնքան էլ ապահով չէր:

Քանի որ վտանգը գնալով մեծանում էր, մենք ստիպված եղանք տեղափոխվել Մշակույթի և երիտասարդության պալատի ապաստարան: Այնտեղ աստիճանաբար հավաքվեց մեր մեծ ընտանիքը՝ հայրիկիս մայրն ու հայրը (տատս ու պապս), հորեղբայրս՝ իր կնոջ ու երեք երեխաների հետ եկան մեր հետեւից, սակայն վերջում այնտեղ մնացին միայն մայրիկիս քույրը և նրա երեխաները, քույրս և եղբայրս: Բայց իմ սիրտը նորից ճաք էր տալիս անհանգստությունից. ես մտածում էի մորաքրոջս աղջկա մասին, որովհետև նրանք մեզ հետ չէին: Փառք Աստծո, ամեն ինչ բարեհաջող անցավ, ու նրանք կարողացան ապահով հասնել Հայաստան՝ Արտաշատ: Այդ ծանր ու դժվարին օրերին հայրս մեզ ու հորեղբորս ընտանիքին խնամքով ու աջակցությամբ ապահով հասցրեց Հայաստան՝ Մասիս քաղաք: Մենք բոլորս հաստատվեցինք նույն տան մեջ: Այդ տանը միասին ապրած երկու տարիների ընթացքում մեր կյանքում մի հրաշալի ու լուսավոր իրադարձություն տեղի ունեցավ. հորեղբորս ընտանիքում ծնվեց մի աղջիկ բալիկ: Նրա ծնունդը կարծես նոր կյանքի, օրհնության ու խաղաղության ավետաբեր լիներ մեր ողջ ընտանիքի համար, մի լույս, որը ցրեց անցյալի ծանր հուշերը: Այդ տանը երկու տարի հորեղբորս ընտանիքի ու հարազատներիս հետ կողք կողքի ապրելուց հետո հայրիկիս հարազատները տեղափոխվեցին Երևան, իսկ հետո մենք տուն գտանք և ընտանիքով տեղափոխվեցինք վարձով առանձին ապրելու, իսկ պապիկս ու տատիկս բնակություն հաստատեցին էջմիածնում:

Այսօր մենք ֆիզիկապես այստեղ ենք, բայց մեր հոգին, մեր մանկությունն ու մեր պատմությունը մնացին այնտեղ: Մեր Արցախը ընդմիշտ կապրի մեր սրտերում: Ու ես հավատում եմ, անդադար հույս ունեմ, որ մի օր մենք նորից ետ ենք գնալու, նորից քայլելու ենք Ստեփանակերտի փողոցներով ու գրկելու ենք մեր հավերժական լեռները...

Իննա ԹԱՐԱՆՅԱՆ

ԳՐԱԿԱՆ ԱՐՑԱԽ

ԿԱՄՈ ԲԱԼԱՅԱՆ

ԴՌՆԵՐԸ

«ՏԱԳՆԱՊՆԵՐ» շարքից

ԵՐԿԻՐ,
Չարագույժ և աղետալից են
Բացվում ու փակվում քո դռները,
Լուսաբացներն ու մայրամուտները,
Անկանխատեսելի են ելքերը,
Եվ անքննելի են ժամանակները...

***

Դիտում եմ և զննում,
ՏԻՐՈՋ հղած բոլոր նշանները,
Մարտահրավերները, արհավիրքները,
Աղետաբեր պատերազմները,
Վտանգված սրբազան տարածքները,
Ավանդույթները, բարքերը,
Փլվում են, ավերակվում տաճարները,
Արնոտ են խաչերը, փշրված՝ խաչքարերը,
Փլված՝ տապանները...

***

Չարիքը գրոհում է վարը և վերը,
Հիմքերը, ընդերքները,
Մարդկային հոգիները,
Արժեքները, արժանիքները,
Երկինքը, տիեզերքը, մոլորակները,
Ամենը, Աստվածայինը,
Խոցում են նրա ժանիքները,
Մտքերը, ճանկերը, մագիլները,
Ամենուր ակտիվ, ագրեսիվ են չարերը,
Անճարները, անճարակները,
Լպրծունները, օձերը,
Ճարպիկները, չարագործները...

***

Խորտակված են,
Խորտակվում են հոգևոր և նյութական
Բոլոր դարպասները,
Առաջնագծերը գրոհում են
Որկրամոլները, տգետները, տհասները,
Անբարո գործերի և մոլորության մեջ
Կորստյան են մատնվում
Արդարն ու ճշմարիտը, բարին ու սերը,
Մարում են լույսերը,
Թևաթափ են հույսերը...

***

Ձգաստության, սթափության, վերադարձի,
Ինքնաճաղկումի, ինքնախարանի,
Ապաշխարանքի ու դարձի,
Ազդակներ և նշաններ է հղում
Երկրին ու մարդուն ՏԵՐԸ...
Եվ ո՞վ պիտի ճերմակը գծի,
Կարմիրը հատի,
Ընկալվում են երկնային ահազանգերը՝
Որպես ձայն բարբառո հանապատի...

***

Մոլորակի վրա
Ճահճակալում են լճերն ու գետերը,
Աղակալում բերրի հողերն ու դաշտերը,
Աղտոտվում են օվկիանոսները,
Ծովերը, անգամ՝ աղբյուրները,
Կտրտվում, հատվում դարավոր ծառերն
Ու անտառները,
Անապատների վերածվում
Ծաղկուն օազիսները,
Այգիները, արոտները, արտերը,
Ծեծում են կարկտաբեր ամպերը...

***

Շեղվել են բևեռները,
Հալչում են, փլվում այսբերգները,
Երկիրը ծածկում են աղբակույտերը,
Ծանր նյութերի արտանետումները...

***

Թունավորվում է հողը, ջուրը, օդը,
Մթերքը, մթնոլորտը, ընդերքը,
Երկնոլորտը և կենսոլորտը,
Չարը բռնել է մարդու կոկորդը,
Եվ չարը հենց ինքն է՝ մարդը,
Որ կրակի է տալիս հարևանի արտը...

***

Մեր շրջապատը զավթել են
Մանրէները, միկրոբները,
Բացիլները, բակտերիաները, վիրուսները,
Բորենիները, ստոր մտքերը, կրքերը...

***

Ո՞վ է ստեղծում այս խառնաշփոթը,
Ո՞վ է բերում մեզ պատերազմի բոթը,
Ո՞վ է շեղում մեր ճշմարիտ հունը,
Ո՞վ է քանդում թռչունների բույնը,
Ո՞վ է տանում բախումների
Եվ առճակատման
Ազգերին ու ժողովուրդներին,
Ո՞վ է շիկացնում և ուղղորդում կրքերը...
Ո՞վ է վտանգում և ավերում
Եդեմը, դրախտը,
Ո՞վ է հրում Երկիր մոլորակը
Դեպի երրորդ աշխարհամարտը,
Ո՞վ է փորձում շահել
Աշխարհակործան մարտը...

***

Նրանք՝ նորօրյա կուռքերը,
Երբ փառասիրությունը, գայթակղությունը,
Դատարկությունը, ատելությունը,
Ագահությունը, շահը, պաշտոնը, գահը,
Ավերել են նրանց մտքերը,
Նրանք, որ նենգ ու ագահ հայացքները
Գամել են ԱՍՏԾՈ շինվածքին
Եվ մահացու վերքեր են բացում
Կործանվող, արյունոտ մոլորակի կրծքին...
Երբ մարել է Աստվածայինը, ոգին,
Եվ գերի է մարդը նյութին ու չարիքին,
Ծանր է մեղքերի բեռը նրա շալակին...

***

Առճակատումները, հակառակությունները,
Հակասությունները, տեղահանությունները,
Էթնիկ զտումները,
Գաղթականները, միգրանտները,
Երկրայինների փորձերը և գործերը,
Անբարո կրքերը,
Անգամ՝ գրքերը, երգերը, մտքերը,
Մարդկային անառակ վարք ու բարքերը...

***

Կեղծ են ու ձևական
Համաշխարհային խաղացողների,
Կազմակերպությունների
Կոչերն ու հայտարարությունները,
Ետնահարթակներում,
Վարագույրից այն կողմ
Նրանք փնտրում են սոսկ իրենց շահերը,
Պատերազմների,
Մարդկային ողբերգության գնով
Նրանք պարզապես պահում են գահերը,
Նրանք են հրահրում
Դավերը, ավերները, մահերը,
Դառն ու սպառնալից են իրողությունները,
Անհավատ, անհույս, դատողությունները,
Հետևությունները...

***

Պղծադավ, նենգալից՝ գործողությունները,
Եվ անդառնալի՝
Անկումներն ու կորուստները,,
Երբ այլևս լքել է մեզ ՏԵՐԸ...

***

Փլվում են, կործանվում, ավերվում,
Ապականվում և անկայուն են,
Երերում են երկրի հիմքերը...

***

Զարմանում ու զայրանում ես,
Ալեկոծվում ես,
Մերթ- մերթ, անգամ
Չափերից ու ափերից ելնում ես,
Անգամ մոլեգնում ես,
Որ մարդիկ թյուր են ընկալում
Կամ մոռացության են տալիս,
Եվ մի կողմ են դրել
Վերից մեզ տրված, չարին հաղթելու
Հզոր զենքերը՝
Արարչի պատվիրանները,
Երբ անվերջ, անընդհատ խախտում ենք,
ՏԻՐՈՋ մտքերը և խոսքերը,
Եվ մոռացության են մատնվում,
Հոգու տաճար տանող ճանապարհները.
Ո՞վ է խնամում հոգու պտուղները,
Երբ ժանգն է պատել հոգևոր սրերը...

***

Չարիքը ամենուր է, բախվում ենք,
Բայց ոչ թե հաղթում ենք,
Այլ ամեն քայլափոխի
Դառնորեն պարտվում ենք...

***

Սթափվում ենք, զգաստանում ենք,
Մեղանչում ենք,
Աղոթում, աղաչում և՝ զղջում ենք,
Բայց կառչում ենք չարիքին,
Եվ անվերջ նահանջում ենք...

***

Ունկնդրում եմ տիեզերական զանգերի
Ահազանգերը,
Եվ ղողանջները,
Տեսանելի և անտեսանելի ուժերի
Երկնային ու երկրային բախումները,
Միաբևեռ աշխարհակարգի՝
Միմյանց գետնելու և ծվատելու
Ողորմելի ճիգերը,
Իսկ գուցե՝ նաև
Անհատուցելի կորուստները...

***

Եվ տագնապալից է բացվում օրը,
Որ հիշեցնում է,
Եվ ավելի սարսափելի է,
Քան Սոդոմ - Գոմորը...

***

Դժվար է քննել ու դիտարկել,
Հետևանքները,
Երկրին ու մոլորակին սպառնացող Վտանգները...

***

Անգամ դիտում եմ,
Թե ինչպես են խուժել,
Եվ ինչու են լքում քաղաքը
Հազարավոր սև ագռավները
Եվ առնետները...

***

Լուսնահաչ տալիս թափառական շները,
Մահասարսուռ ոռնում
Գիշատիչ գազանները,
Ծվատում, քրքրում, հոշոտում,
Նրանց արնոտ երախները
Ինչպես են չար գործերի մեջ խրվում,
Մոլորվում մարդը,
Իշխանավորները.
Անգամ՝ ԱՍՏԾՈ սպասավորները...

***

Պատվանդանների վրա
Երերում են հին ու նոր կուռքերը,
Բռնակալների և գահակալների տակ
Ճոճվում են
Անկուշտ, արյունռուշտ
Եվ շահամոլ աթոռները...

***

Անհավատներ են թե՛ տիրակալները,
Ամբարիշտները, թե՝ արքաները,
Անօրենները, թե՛ դևերը,
Որ հրահրում են կործանարար խաղերը,
Որ բերում են դաժան աղետները,
Արյունոտ բախումները...

***

Դավերը, ավերը, ցավերը,
Երբ արյան ու մահվան
Թատերաբեմ են դարձրել Երկիրը
Սատանայի ծառաները...

***

Նայիր դեպի վեր,
Տե՛ս՝ ինչպես են երկնքում թևաբախում
Արծիվները, աղավնիները, ծիծեռնակները,
Ամենը կառավարվում է ի վերուստ,
Եվ այն, ինչ կատարվել է,
Եվ կատարվում է ներքուստ,
Կլինի շուտով՝
Բացահայտ ու՝ արտաքուստ...

***

Եվ կերևակվեն չարի
Բոլոր ստոր ու նենգ գործերը,
Եվ Բարձրյալը կցրի քաոսը...
Եվ կծածկի
Մարդուն կործանման տանող
Մոլորության տիեզերափոսը...

***

Եվ ՏԵՐԸ
Կվերադարձնի բոլոր կորուստները
Եվ կբացի քո առաջ
Սպասումների, հույսի, հավատի, կարոտի,
Եվ արդարության ու ճշմարտության,
Խաղաղության,
Խոցված ու գոցված դռները...

***

Եվ էլ չի լինի,
Հսկիչ անցակետ, կամուրջ, Հաքարին,
Կխորտակվեն բոլոր արգելքները
Քո վերադարձի ճանապարհին,
ՏԻՐՈՋ հրեշտակները
Կճեղքեն մեկեն, արնով շաղախված
Կարմիր ժայռերը, որձաքարերը,
Չարիքի բույնը՝ Ագռավաքարը...

***

Կարթնանա ոգին՝ շղթայված, գերված,
Նեռից անիծված Փոքր Միերը
Կելնի անդունդից,
Արդարը, տերը,
Ճշմարիտ արքան՝ Ավետյաց երկրի...

***

Կփոխվեն ՏԻՐՈՋ՝ ժամանակները,
Կփոխվի դարը,
Եվ կծաղկունքվի ավետաբերը,
Եվ պիտի հեղեղի երկիրը,
Ծովանա, ծավալվի բարին ու սերը,
Եվ գիշեր ու ցերեկ և այլևս՝ երբեք
Ես չեմ կողպի,
Իմ տան դռները, դարպասներ,
Սահմանները...

***

Եվ պիտի ուղղվեն
Անարդար ժամանակների սլաքները,
Կողմնակալ ու շահակնկալ
Կշիռները և՝ նժարները...
Եվ ազգերն ու ժողովուրդները՝
ԱՍՏԾՈ որդիները,
Այլևս իրար հետ չեն պատերազմի,
Եվ նրանք կսովորեն՝
Իրենց սրերից՝ խոփեր,
Եվ իրենց նետերից
Ու նիզակներից մանգաղներ կռել...

***

Եվ մարդու որդիները
Օձի ձագերի հետ պիտի խաղան,
Եվ քարբի բնի վրա նստեն...

***

Եվ գայլն ու գառը,
Միասին պիտի արածեն...
Եվ առյուծն ու ցուլը հարդ կճարակեն
Եվ երկրի վրա այլևս չարիք չի լինի...

***

Եվ ազգերն ու ժողովուրդները
Հեղեղանման կգան և ՏԻՐՈՋ առաջ
Կկանգնեն արդար դատի,
Եվ Բարձրյալը
Ամենին՝ ըստ իրենց գործերի
Պիտի հատուցի,
Եվ դժոխքը՝ տեղը
Անօրենի, անհավատի, ամբարիշտի...

***

Հաղթողները
Բարձրյալի հետ կնստեն սեղան՝
Հոգևոր խրախճանքի...

***

Եվ պարտվողը կլինի անբարոն,
Անարդարը, խառնակիչը, ավերիչը,
Չարը, չարիքը՝ Նեռը...

***

Հաղթողը մարդը՝ հավատավորը,
Արդարը, բարոյականը, ճշմարիտը,
Եվ տիեզերքի, երկնքի, երկրի
Ճարտարապետը՝ արարիչը՝ ՏԵՐԸ...

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ՄԵԴԱԼՆԵՐՈՎ ԵՆ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Աբու Դաբիում օգոստոսի 16-23-ը ընթացած՝ 2026 թվականի խառը մենամարտերի (MMA) պատանիների աշխարհի առաջնությանը Հայաստանի հավաքականը մեկնել էր 45 հոգուց բաղկացած պատվիրակությամբ: Մրցաշարում աշխարհի տարբեր երկրներից հանդես էին եկել MMA-ի նոր սերնդի լավագույն մարզիկները: Հայաստանը շարունակում է իր արժանի տեղը զբաղեցնել համաշխարհային MMA-ի մեծ ընտանիքում: Հայաստանի եւ Արցախի մի շարք մարզիկներ ընդգրկող հավաքականը մեկնել էր Արաբական Միացյալ Էմիրություններ՝ Հայաստանի խառը մենամարտերի ֆեդերացիայի նախագահ Գարեգին Աղաբալյանի գլխավորությամբ:

Առաջնությունից մեդալներով վերադարձած պատվիրակության ձեռքբերումների մասին պատմեց Գարեգին Աղաբալյանը. «Ավարտվեց 2026 թվականի աշխարհի խառը մենամարտերի MMA պատանիների



առաջնությունը Աբու Դաբիում, որին մասնակցում էր 70 երկիր՝ ամբողջ աշխարհից 1300 մարզիկ: Դժվար պայքարում մեր մարզիկները կարողացան 3 մեդալ վաստակել: 2 մեդալ վաստակեցինք «A» կատեգորիայի մեջ, այսինքն՝ ավագ տարիքի պատանիների շարքում: Ռաֆիկ Ալեքսանյանը 65.8 կգ քաշային կարգում դժվարին պայքարում փայլուն ելույթ ունեցավ՝ հաղթելով 6 մենամարտ եւ զբաղեցրեց առաջին հորիզոնականը՝ դառնալով աշխարհի չեմպիոն, իսկ էդիկ Մարտիրոսյանը (Գորիսից) ավագ տարիքի պատանիների առաջնությունում 83.9 կգ քաշային կարգում կարողացավ նվաճել 3-րդ տեղը՝ հաղթելով երեք մենամարտ, պարտվելով ՌԴ-ն ներկայացնող դաղստանցի մարզիկին: Նա դարձավ բրոնզե մեդալակիր: Մեկ մեդալ ունեցանք նաեւ փոքր տարիքում: Սոս Մարտիրոսյանը հանդես եկավ 52 կգ քաշային կարգում: Հաղթելով երեք մենամարտ՝ զբաղեցրեց 3-րդ հորիզոնականը՝ նվաճելով աշխարհի առաջնության բրոնզե մեդալը: Ընդհանուր հաշվով Հայաստանից մասնակցում էր 31 մարզիկ»:

Հայաստանի Հանրապետության հավաքականը «A» խմբում զբաղեցրեց պատվավոր 7-րդ տեղը:

Խառը մենամարտերի ֆեդերացիայի նախագահը ներկայացրեց նաեւ առաջիկա ծրագրերը. «Առաջիկայում պատրաստվելու ենք Անգլայում կայանալիք Աշխարհի գավաթի խաղարկությանը, այնուհետեւ մասնակցելու ենք Թբիլիսում կայանալիք երիտասարդների եւ մեծահասակների աշխարհի առաջնությանը»:

Մարզիկներին շնորհավորում ենք աշխարհի առաջնությունում մեդալների արժանանալու կապակցությամբ եւ ցանկանում հաջողություն առաջիկա մարզական մրցաշարերում:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

Դեպի դպրոց

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵՆՔ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԵԿՆԱՐԿԻՆ

Ամառային երկար արձակուրդից հետո այնքան էլ հեշտ չէ վերադառնալ դպրոցական ռիթմին. շուտ վերկենալը, տնային առաջադրանքները եւ հագեցած ուսումնական օրերը կարող են սթրեսի պատճառ դառնալ երեխաների ու ծնողների համար: Մինչդեռ ճիշտ նախապատրաստվելը կօգնի հանգստից դեպի ուսում անցումը դարձնել հարմարավետ: Պարզաբանենք, թե ինչպես աստիճանաբար վերականգնել դպրոցական ռեժիմը, տրամադրվել ուսմանը եւ հավաքել անհրաժեշտ ամեն բան առանց շտապելու:

Արձակուրդից հետո դպրոց վերադառնալը ոչ միայն սթրես է, այլեւ նոր հնարավորություններ: Աստիճանաբար նախապատրաստվելը, դրական տրամադրվածությունը եւ կազմակերպվածությունը օգնում են երեխային հեշտ եւ հաճույքով մտնել ուսումնական ռիթմի մեջ:

Հաճախ հանդիպող սխալներից է այն, որ ուսումնական տարվա սկիզբը ծնողները կապում են անփոփոխ սթրեսի եւ սարսափի հետ ամբողջ ընտանիքի անդամների համար: Երեխան պատճենում է ձեր պահվածքը եւ վերաբերմունքը. եթե նա զգում է, որ ծնողները նյարդային են եւ վիճում են անգամ գրենական պարագաների գնման հարցում, ապա դպրոցի հանդեպ նրա վերաբերմունքը կլինի դրան համապատասխան:

Արձակուրդից հետո ուսմանը պատրաստվելիս կարեւոր է, որ ծնողները ցույց տան հանգիստ եւ դրական տրամադրվածություն: Խոսեք երեխայի հետ նրա հույզերի եւ զգացմունքների մասին՝ «Երեւի դու անհանգիստ ես դպրոց գնալուց առաջ: Պատմիր, թե ինչ ես զգում: Ի՞նչն է քեզ ուրախացնում գալիք ուսումնական տարում: Իսկ ի՞նչն է տխրեցնում»: Այդպես է ձեւավորվում փոխադարձ վստահությունը՝ «մենք քո կողմից ենք, եւ միասին կհաղթահարենք ամեն ինչ»:

Խոսեք երեխայի հետ, իմացեք նրա տրամադրության եւ տագնապների մասին ուսումնական տարվա մեկնարկից առաջ: Ինչքան շատ հարցեր դուք քննարկեք, այնքան արագ կանցնի ուսմանը հարմարվելու գործընթացը եւ հեշտ կլինի լուծել առաջացող խնդիրները: Հասկացրեք, որ դուք միշտ նրա կողքին եք եւ պատրաստ եք աջակցել ցանկացած դժվար իրավիճակում:

Եթե երեխան շատ անհանգստացած է դպրոցական պարապմունքներին վերադառնալու առթիվ, փորձեք կիրառել հոգեբանական միջոցներ՝ տագնապները հանելու համար:

Նկարչություն: Առաջարկեք, որ նա նկարի իր վախերն ու զգացողությունները: Անգամ անիմաստ բծերն ու գծերը կօգնեն դուրս նետել հույզերը եւ հավասարակշռության գալ:

Հաջողության իրավիճակ: Պետք է հիշել որեւէ իրավիճակ, երբ երեխան հաջողություն է ունեցել: Հաղթանակ մրցույթում, լավ գնահատական բարդ առարկայից, ուսուցչի խրախուսանք: Հաջորդ քայլով պետք է երեխայի երեւակայության մեջ հստակ վերստեղծել այն հույզերն ու մարմնական արձագանքները, որոնք այն ժամանակ ծագել են: Այս վարժության պարբերաբար կատարումը օգնում է անհրաժեշտ պահին «միացնել» այն վիճակը, որտեղ երեխան վստահ է, որ իր մոտ ամեն ինչ ստացվելու է: Երեխան կդառնա ավելի ինքնավստահ եւ կկարողանա հաջողությամբ հաղթահարել վախերն ու տագնապները:

Որոշեք սահման հանգստի եւ ուսման միջեւ: Պլանավորեք, թե օրվա մեջ քանի ժամ է պարապելու երեխան: 5-11-րդ դասարանների համար զբաղվածությունը չպետք է գերազանցի 5-7 ժամը: Թողեք, որ դեռահասն ինքը պլանավորի: Այդ դեպքում ուսման վրա ծախսվող ժամանակը այնքան էլ վախեցնող չի լինի, ինչը թույլ կտա երեխային տրամադրվել դասերին:

Ամռանը երբեմն թույլատրելի է քնել մինչեւ կեսօր եւ պառկել քնելու կեսգիշերից հետո: Ուսումնական տարին մոտենալու վրա ավելի լավ է սահմանել հստակ ժամանակ քնի համար: Քունը կարեւոր դեր ունի երեխայի զարգացման համար: Դեռահասի համար երաշխավորվող քնի տեւողությունը 9,5 ժամ է: Այս փաստը պետք է հաշվի առնել նոր ուսումնական տարվան նախապատրաստվելիս:

Օգնեք կրկնել անցածը: Ավանդական համակարգը չի ներառում դպրոցին ադապտացվելու հատուկ ծրագիր արձակուրդներից հետո: Առաջին պարապմունքներից ուսուցիչը ծանրաբեռնում է երեխաներին նոր նյութով՝ շտապելով հասցնել ծրագիրը: Դպրոցը չունի այնքան ժամանակ, որ հատկացնի անցածն անշտապ կրկնելուն: Կարելի է կանոններ սահմանել, օրինակ՝ կրտսեր դասարանցիների հետ օրական մեկ ժամ կրկնել բազմապատկման աղյուսակը կամ բարելավել ձեռագիրը: Ավագ դասարանցիների հետ կարելի է սահմանել պարտադիր ընթերցանության մեկ ժամ կամ լուծել մաթեմատիկական խնդիրներ: Երեխան պետք է հասկանա պարբերական կրկնողության կարեւորությունը, որ սեպտեմբերի սկիզբը չդառնա սարսափելի ծանրաբեռնված:

Թարմացրեք դաս սովորելու տարածքը: Ուսումնական տարվա մեկնարկին ընդառաջ թարմացրեք այն տեղը, որտեղ երեխան դաս է սովորում: Փոփոխությունը կօգնի տրամադրվել աշխատանքային գործընթացին: Կատարեք մաքրություն, դեն նետեք հնացած ապրանքները, անհրաժեշտության դեպքում գնեք գրենական նոր պիտույքներ: Ուսումնական տարին սկսելուց առաջ գնումների գնալը արարողակարգ է, որը զուգորդվում է դրական ապրումներով: Կրտսեր դպրոցականի համար իր սիրելի մուլտֆիլմի հերոսներով գրենական առարկան լավ միջոց է տրամադրվելու դասի գնալուն արձակուրդից հետո: Տասը որպես առաջ նա դպրոց գնալ չէր ուզում, մինչդեռ հիմա ուզում է շուտափույթ գնալ եւ օգտագործել դա: Կարեւոր է, որ դպրոցականն ինքնուրույն ընտրի իրեն անհրաժեշտ դպրոցական պարագաները:

Ստուգեք համակարգչի, հեռախոսի եւ այլ ժամանակակից սարքավորումների վիճակը, որոնք պետք են գալու դաս սովորելիս: Ստուգեք, թե հարմա՞ր է այն սեղանը, որի շուրջ երեխան նստելու է ու գրավոր է անելու: Կարեւոր է, որ նա կարողանա մեջքը ուղիղ պահել դաս սովորելիս: Ստուգեք սենյակի լուսավորվածությունը, հաշվի առեք ձախլիկ կամ աջլիկ լինելը: Պատերից կախեք ուսումնական նյութը՝ օգտակար արտահայտություններ, ֆիզիկայի բանաձեւեր եւ այլն: Այդպես ավելի հեշտ է հիշել եւ կրկնել ինֆորմացիան:

Երբեմն ծնողները շտապում են երեխային բեռնել միանգամից ամեն ինչով: Դպրոցի հետ գրանցում են խմբակներ, կրկնուսույցի մոտ: Ճիշտ չէ: Ամառային «ոչ մի բան չանելու» ռեժիմից ինտենսիվ գրաֆիկին անցնելը պետք է կատարվի սահուն: Լրացուցիչ խմբակները, պարապմունքները, դասապատրաստման կենտրոնները պետք է ծրագրավորել սեպտեմբերի վերջերին:

Ս. ԱՎԱԳՅԱՆ

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» կրթամշակութային ՀԿ

✉ ք.Երեւան,
Անտառային փ. 188/16 ☎ 097-22-38-27
E-mail: gorctert@mail.ru: *www.lusarar.info*

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները:
Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Թերթը վաճառքի ենթակա չէ:

Տպագրվում է «Լիմուշ» ՍՊԸ տպարանում:
Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Տպաքանակ՝ 500
Ստորագրված է տպագրության՝ 28.08.2026թ.: